

16  
U-30

George Harper  
of New York

Установка

с утюгом

специальном

20x12

B23

16  
U-30

1

ՀԱՅԱՍՏԱՆ

## S P E C I F I C A T I O N S

## ՄԵԹՈՒԴԻ ԳԵՐԱԳՐԵՑԻՑ

卷之三十一

ԴՐԱՄԱԿԱՆ Վ. ԱՎԵՐԱԿԵԱՑ



A circular blue ink stamp with the text "NATIONAL LIBRARY INDIA NEW DELHI" around the perimeter and the number "1811024840" in the center.

ԵՐԵՎԱՆԻ

Ե ՎՐԱՆ ԱՐԵՈՑԻ ԴԵՇԱԽՈՒ



Հարացած պատճեն  
Ե այս թիվը

ԱՅՈՒԳՎԱՆ Է  
1952 թ.

## ՅԱՄԻՍՆԱԲԱՆ ԹԱՐԴՄԱՆՉԻՆ

Ո՞ս արարչաղիր կարդի բնութեանս որ ինչ  
կարեւոր հանգամանք իցեն առն առն պատշա-  
չեալք՝ անթերի բաշխեալ են՝ ի մարդիկ. սակայն  
և պատճառոք արտաքինք որ ՚ի կազմութեան անդ  
մարդկեղէն բնութեան և կամ յետ կազմու-  
թեանն հասանեն՝ ի վերայ՝ ոչ սակաւ այլայլու-  
թիւն և խանգարումն բերեն՝ ի գործարանս մեր,  
և մանաւանդ յուղեղն որ աթոռն է բանակա-  
նին։ | Տ ահա յուղութիւն ընթացից այսր  
բանականութեան հնարեցան իմաստունք զՏրա-  
նաբանութեանն արուեստ, որ որպէս ղեակ նաւուց՝  
և սա մարդումն է պիտանի։ | Տակ զյաձախութի՛  
ընդարօյս և եկամուտ մոլորութեանց մարդ-  
կայինս մոտաց աւելորդ է՝ ՚ի մէջ բերել աստանոր.  
քանզի և չկը ոք որ անզիտամայցէ զի բազմա-

սպատիկ պատճառք են աղօտանալոյ բանական  
լուսոյ . և ոչ միայն տղիտութեանն խաւար , այլ  
և աւելորդապաշտութիւն , և կանխակալ պաշա-  
րումն , և յամառ նախանձայուզութիւն , և կա-  
մակոր ամբարտաւանութիւն , և մոլար անձնա-  
սիրութիւն , և կրից յուզումն , և ախտից զըր-  
գուութիւնք բազում մռայլ և մթարս թանձրու-  
թեան պատեն վնովաւ . յորմէ և արդարութեն  
կշուութիւն վեր 'ի վայր հարեալ եղծանի :

Ի զարգացումն և 'ի յառաջատութիւն այս-  
պիսոյ բազմաշահ արուեստի յօժարեցաք և  
մեք լինել մերովսանն ձեռնտու , յեղեալ 'ի մերս  
բարբառ զհամառօտ Տրամաբանութիւն ՏԻՒ  
ՄԵՐ ՍԻՒ գաղղիացոյ . և ակն ունիմք զի և համ-  
բաւով գերահուչակ առն ներողամիտ ընդու-  
նելութեան ազգիս եղիցի սա արժանի :

S U T T O S

#### S E T U P C O M M O N S

— 343 —

Վայսաւոր գործողութիւնք հոգւոյ:

Արևը լուսուած յոնչէ զերկուս գոյացու-  
թիւնս . զգոյացութիւն հոգեոր և զգոյացու-  
թիւն մարմնաւոր : Հոգեոր գոյացութեամբ ի-  
մանակք զայն , որ ունի դյատկութիւն խորհելց ,  
ըմբռնելց , կամելց , տրամաբանելց և զգալց .  
այն ինքն է՝ ունելց զտրամադրութիւնս զգաց-  
ման :

Հոգեղէն զոյացութիւնք ստեղծեալք՝ բաժա-  
նին յերկուս սեռս . այսինքն՝ ի հրեշտակս , և  
՚ի մարդկային հոգիս : Վարդ զոր ինչ մի անգամ  
գիտեմք զհրեշտակաց , ՚ի հաւատոց գիտեմք . զի  
որովհետեւ հրեշտակք հոգեոր զոյացութիւնք  
են որ ոչ անկանին ընդ զգայութեամք մերով .  
վասն այսորիկ յոյժ վերապոյն են քան զընա-  
կան լցոս մեր , և է առած իմն ընկալեալ յամե-  
նայն իմաստնոց , թէ հաւատք սակաւ ինչ ուսու-  
ցանեն մեզ զհրեշտակաց , երևակայութիւնն բա-

զում ինչ, իսկ տրամաբանութիւն ոչ ինչքնաւ .  
քանզի ռամիկք ստեղծաբանեն զհրեշտակաց ան-  
համար պատմութիւնս առասպելականս :

**Առդ** ձայնիւս Հրեշտակ իմացեալ լինին առ  
հասարակ թէ բարի և թէ չար հրեշտակքն . և  
երկաքանչիւրոցն գործողութիւնք 'ի հաւատոց  
միայն ծանուցեալ են մեզ :

Օ զոյացութենէ հոգւոյ՝ որ խորհի 'ի մեզ,  
որ ըմբռնէ, որ կամի, որ զգայ, ունիմք զՃանազումն  
միայն 'ի ձեռն ներքին զգացման մերոյ, որով  
մեք 'ի մեզ խորհրդածեմք, ըմբռնեմք, կա-  
միմք կամ յօժարիմք և զգամք զհրեշտութիւն  
կամ զցաւս : Ուստի յայտ է զի մեք ոչ իմանամք  
զգոյացութիւն հոգւոյն, և ոչ զհոգին ճանա-  
չեմք, բայց եթէ 'ի ներքին զգացմանցն, զոր  
ունիմք 'ի յատկութեանց նորին, այսինքն յըմ-  
բըննելոյն, 'ի կամելոյն և 'ի զգալցն :

### ՅՈՒԹԻՌ Ա.

Զանազանութիւն հրեշտակի և մոլոդկային հոգւոյ :

\* **ԱՄԵՆԱՅՑՆ** խտիքն զոր իմաստասելք զնեն 'ի  
մէջ հրեշտակի և մարդկային հոգւոյ, կայանաց  
յայսմ. զի հրեշտակք են զոյացութիւնք լրա-  
ցեալք, իսկ հօգին է զոյացութիւն անլրացեալ-  
այսինքն թէ հրեշտակք ունին զայն ամենայն ո-  
րով կարեն լինել հրեշտակ, և ենթակայանաց

անկախ յայլամենայն գոյացութենէ . իսկ մարդկային հոգւոյ պարտ է միանալընդ մարմնոյ՝ որպէս ոտք և ձեռք ունին յարաբերութիւն առ մարմին ինչ . միով բանիւ հրեշտակն է բոլոր իմն , իսկ հոգին մարդկային է մասն ինչ :

### ՅՈՒՄԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ

Զանազանութիւն հոգւոյ և մարմնոյ :

ՈՒՍՈՒՑԱՆԵՆ մեզ հաւատք , թէ հոգին է զանազանեալ ինչ՝ ի մարմնոյ , այնու զանազանութեամբ որ զտանի ՚ի մէջ այլեայլ գոյացութեանց . և ոչ եթէ այնու զանազանութեամբ որ զտանի ՚ի մէջ մի և նոյն գոյացութեան և նորին յատկութեանց : Կապացուցանի փորձիւ ՚ի ձեռն բնական լուսոյ , թէ հոգին զանազանի ՚ի մարմնոյ :

Լակ ինչ զանազանի յայլմէ էակէ՝ յորժամ զաղափարն զոր ունիմք զմիոյ էակէ՝ է այլ ՚ի միւսոյն , և մանաւանդ յորժամ զաղափար միոյն է ներշակ միւսոյն : Դաղղափարն արեւու զոր ունիմք , է այլ ՚ի զաղափարէ երկրի . ապա արեւն և երկիր են երկու այլեայլ գոյացութիւնք : Վեծազոյն զանազանութիւն է անդ , եթէ զաղափար իմն արտաքսէ զայլ ինչ զաղափար . զոր օրինակ զաղափար բոլորակին արտաքսէ զզաղափար քառակուսոյն :

Արդ գաղափարն տարածութե՛ զոր ունիմք ,  
փակէ զգաղափարն մասանց՝ Երկայնութեան ,  
լայնութեան և խորութեան , բայց արտաքսէ  
զգաղափարն մտածութեան և զգացման . ապա  
Տարածութե՛ զանազանի 'ի լլ' տածմանէ . զի՞նոյն  
իսկ գաղափարն զոր ունիմք զմտածմանէ , ոչ փա-  
կէ զգաղափարն տարածման , մանաւանդ թէ  
արտաքսէ . ապա վասն զի հոգին է 'ի մեզ է-  
ակ իմն մտածող , ոչ է էակ տարածեալ . և մար-  
մինն զի է 'ի մեզ էակ իմն տարածեալ , ոչ է  
էակ մտածող . որովհետեւ գաղափար միոյն ոչ  
է գաղափար միւսոյն :

### ՅՈՒԹԻՆԴԱՐ.

Միաւորութիւն հոգւոյ և մարմնոյ :

Ան ՄԱՐԹ էր ըմբռնել , թէ զիա՞րդ էակն սոսկ  
հոգեւոր՝ այսինքն է մտածող՝ որ չիցէ էակ տա-  
րածեալ , կարասցէ միաւորիլ ընդ տարածեալ  
մարմնոյ իմիք , որ չիցէ Երբեք մտածող . սակայն  
ոչ կարեմք յերկրայս լինել զայսր միաւորութե-  
նէ , որովհետեւ խորհիմք և ունիմք մարմին . այս  
միաւորութիւն է գաղտնիք արարին : Եւ զոր  
միանգամ զիտեմք զմիաւորութենէ այն ինքն է ,  
զի 'ի մտածելն ինչ և 'ի կամել հոգւոյ , մարմին  
մեր ներգործէ զանազան շարժմունս . և փոխա-  
դարձաբար 'ի շարժման մարմնոյ մերոյ ունի

Հոգի մեր խորհուրդս ինչ և զգացմունս . և ա-  
մենայնն համաձայն օրինաց , որք եղեալ են յա-  
րաբէն բնութեան . և օրէնքս այս կողին օրէնք  
միաւորութեան հոգւոյ և մարմնոյ :

### ՅՈՒԹԱԿԱՆ Դ.

Յատկութիւննք հոգւոյն :

||2 Ճանաչեմք զշոգին և ոչ զյատկութիւնս  
նորա , բայց եթէ 'ի ձեռն ներքին զգացման զոր  
ունիմք զնմանէ : Օ զամք և ունիմք ևս անդրա-  
դարձ զգացումն մերոց զգացմանց թէ մեք զգամք .  
այս ներքին զգացումն է առաւել տարածա-  
գոյն և համրական յատկութիւն հոգւոյն . մար-  
մինն անլուգունակ է զգալոյ , հոգին միայն է որ  
զգայ : Քայսմանէ յառաջ եկն կարծիքն Կար-  
դեսեանց , որք համարեին թէ անբան կենդանիք  
են սոսկ ինքնաշարժ մեքենայք , որպէս արհես-  
տակերտ սրնզահարն և բազն , զորս Ճարտա-  
րեաց Աքանսոն :

Վանզի ասելին , եթէ անբան կենդանիք զգան ,  
ապա ունին զշոգի . և եթէ ունին զշոգի , ապա  
են ընդունակ բարւոյ և ըարի , ապա ևս և վար-  
ձուց և պատժոց . և յայսմանէ հետեւի ասելին  
Եթ հոգին անբանից իցէ անմաշ :

Վարդ մինչ խօսիմք զյատկութեանց հոգւոյն  
խօսիմք միայն զմարդկային հոգւոյ . զի՞ յատկու-

թիւնք հոգւոց անբան կենդանեաց Ա. Ե է զիտելի , որոյ անսահման կարողութիւնն կարեւ արար-  
չաղործել հօգիս ըստ զանազան կարգի . յորոց  
ոմանք իցեն անմահ , և ոմանք եղծական , ոմանք  
իցեն ձանաշող բարւոյ և չարի , և այլք ոչինչ  
ձանաշումն բարւոյ և չարի ունիցին :

Վատանին այլեայլ կարգք 'ի հրեշտակս . Են  
և այլեայլ աստիճանք ձանաշումն 'ի մարդկային  
հօգիս . ոչ է նոյն ձանաշումն թանձրամտին և  
անզգայացելցն , և մանկան՝ որ չեւ ես է ընդու-  
նակ բարւոյ և չարի մինչև ցորոշեալ ինչ հա-  
սակ : Յառաջքան զլարդեսեանս քաջ ծանեան  
նախնիք և արդիք ես , թէ կենդանիք ունին  
զգացումն տեսանելց և լելց , և այլն . և թէ  
Են զգացողք հեշտութեան և ցաւոց :

Չգիտեմ թէ դու տեսանիցես զիս , եթէ ոչ  
այնու՝ զի տեսանեմ թէ և դու ունիս զաշա որ-  
պէս զիս . ուստի և այնշափ տպաւորութիւնն 'ի  
գործ զնես , որպէս աչք քո ընդունին . նշա-  
րեմ և 'ի կենդանիս զնոյն գործարանս , և զնոյն  
կարգ գործողութեանց :

Երկու են տեսակք զգացման , առաջինն կոչի  
Անմիջական զգացումն , և երկրորդն Ո՞իջական  
զգացումն : Անմիջական զգացումն է այն՝ զոր  
ընդունիք անմիջապէս յարտաքին տպաւոր-  
մանց առարկայից 'ի գործարանս զգայարանաց  
մերոց : Ո՞իջական զգացումն է ներքին անդրաւ  
դարձութիւն զօր առնեմք 'ի վը տպաւորմանց ըն-

դունելոց յանմիջական զգացմանեւ . և այս է զգացումն զգացման : Խոժի զգացումն Միջական . վասն զի ենթաղրէ միջնորդ իմն, և այս միջնորդ է զգացումն Կնմիջական :

Հորժամ տեսանեմ զարեգակն , զգացումն այն զոր արեգակն ներգործէ յիս , կոչի զգացումն Կնմիջական . վասն զի զգացումնս այս ենթաղրէ միայն զառարկայն և զգործարանն : Օքացումն զոր ընդունիմ յերաժշտական զործեաց է զգացումն անմիջական . վասն զի ենթաղրէ միայն զգործիմն և զունին :

Ծայց ներքին անդրադարձմունք զոր յետ այնորիկ առնեմք 'ի պատճառս այսոցիկ առաջին զգացման, ներգործին միջական զգացմամք . այսինքն 'ի ձեռն զգացման որ ենթաղրէ զնախընթաց զգացումն ինչ :

Հոգին ոչ ունի զիարողութիւն զգացման թէ անմիջապէս և թէ միջնորդաւ , բայց եթէ 'ի ձեռն այլևայլ զործարանաց մարմնոյ , ըստ օրինաց միաւորութեան հաստատելոց յարախէն :

Հոգին զգայ անմիջապէս 'ի ձեռն արտաքին զգայարանաց . Հոգին զգայ միջապէս 'ի ձեռն զործարանաց ներքին զգայարանաց ուղղոյն : Օքայարանքն արտաքին են արտաքին մասունք ինչ մարմնոյ մերոյ , որովք զգածիմք այնպէս . որպէս ոչ կարեն զգածել զմեզ այլ ամենայն մասունք մարմնոյ մերոյ . ուստի ոչ տեսանեմք եթէ ոչ աչօք մերովք , և ոչ լսեմք , եթէ ոչ ականջօք մերովք :

Վրտաքին զգայարանք են թուով հինգ , որք  
են . Տեսանելիք , Լոելիք , Շաշակելիք , Շա-  
շափելիք և Հոտոտելիք . Տեսամնելիքն ընդու-  
նին զլցու և զգոյնս , լսելիքն զգածին 'ի ձայնից ,  
Զաշակելիքն համովք , Հոտոտելիքն հոտովք , իսկ  
շօշափելիքն զամնազան որակութեամբ շօշափելի  
առարկայից . որպիսիք են ջերմութիւն , ցրտութիւն ,  
կարծրութիւն , կակղութիւն , յատկութիւն ո-  
ղորկութեան և խոշորութեան և այլոց սոցին  
նմանեաց :

Հետազօտել զկազմութիւն արտաքին զգայա-  
րանաց փիլիսոփայի է անկ . բաւական է աս-  
տամօր նշանակել . թէ ջիղք որով ամենայն զգա-  
ցողութիւնք կատարին , ունին զերկուս ծայրս .  
մինն արտաքին որ ընդունի զտպաւորութիւնս  
առարկայից , և միւսն ներքին որ զայնոսիկ հաղոր-  
դէ ուղղոյն :

Ուղեղն է զոյացութիւն ինչ կակուղ յա-  
ւետ կամնուազսպիտակ , բաղկացեալ 'ի փոքրա-  
զոյն Մսանից ' լցեալ մանր երակօք մղնեաց , է  
պահարան և աղըերակն կենդանական ոգւոց :

Ամենայն ջիղք որովք ընդունիմք զտպաւո-  
րութիւնա՝ եղերին յուղեղն և մաննաւանդ յայն  
մամն ուղղոյն , որ կոչի Մարմին կոշտաւոր <sup>1</sup> . որ

<sup>1</sup> Մսան՝ է բոլորք մասն ինչ 'ի մարմին՝ հաստեալ յարար-  
չէն առ 'ի քամել զհիւթս մարմնոյ . զոր գաղցիացիք կոչեն  
Glande և հայերէն խոյլ :

<sup>2</sup> Մարմին կոշտաւոր , է այն մասն ուղեղին , որ ծածկէ  
զերկուս խորշ նորա . զսա գաղցիացիք Corps calleux կոչեն :

Համարի իրքեւ կայան հոգւոյն :

Ի պէսպիսութէ թանձրութէ, բնութեան և գասաւորութէ նուրբ մասանց որք բաղկացուցա նեն զգոյացութիւն ուղղոյն, յառաջ գան զրեթէ անհամար զանազանութիւնք մոտաց . ըստ այսմ առածի, թէ ։ Վ մենայն որ ընդունի, ընդունի ըստ տրամադրութեան և վիճակի իւրոյ ։ + ուստի ՚ի շառաւիղաց արեւու անդանայ տիղմն և կակղի մոմն :

Տպաւորութիւնք առարկայից որք զգածեն զարտաքին մամն զգայարանաց, յորժամբերին ՚ի ներքին ծայրից զգայական ջղաց ՚ի զոյացութիւն ուղղոյն, յայնժամ ըմբռնեմք զառարկայն. և է սա անդանօր տպաւորութիւն ինչ անմիջական :

Վ յս առաջն տպաւորութիւն թողու հետո յուղեղն, և այս հետք մնան անդ յերկար կամ սուղ ըստ կակղութեան կամ ըստ կարծրութէ զոյացութեան ուղղոյն :

Ե յորժամ այս հետք այս ծալք և այս տպաւորութիւն վերաստին զարթնու ՚ի ձեռն ընթացից կենդանական ոգւոյ կամ արեան, յիշեմք զառաջն կամ զանմիջական զաղափարն . և այս է որ կոչք Եկշողութիւն :

Վ պատիւք այսր հետոյ կամ շաւղաց, անզրագառնամք ՚ի մեզ յինքեանս, զգամք զզգացումն մեր, և այս է զգացումն անզրագարձ, զոր կուեմք Վիջական զաղափար. որովհետեւ այս մի-

ջական զաղափար ոչ է՝ ի մեզ, բայց եթէ միջնորդութեամբ նախորդաց տպաւորմանց զոր ընկալաք՝ ի ձեռն զգայարանաց :

Քետ ընդունելոյ մեր զտպաւորմունս ինչ՝ ի ձեռն աչաց, կարեմք յիշատակել զպստկերս առարկայից, որք զմեզ զգածեցուցին. և այս կարողութիւն կոչի Երեւակայութիւն, և այս ես է ներգործութիւն ինչ մնացեալ յուղեղն՝ ի հետոց անտի : Աչ գիտեաք կազմել զգաղափարս, ոչ ըզպատկերս իրաց, եթէ չեր յառաջազդյն տպաւորութիւն ինչ՝ ի զգայարանս մեր . բայց ահա զպեսպէս զործողութիւնս կարող եմք առնել, ի պատճառս տպաւորմանց զոր ընկալեալ ունիմք :

Ա. Կարող եմք միաւորել զգաղափարս ումանս, որպէս զգաղափարն լերին և ոսկւոյ, և Երեւակայելեառն ոսկեղէն :

Բ. Կարող եմք կազմել զգաղափար ինչ յաւելմամք . որպէս յորժամ՝ ի զաղափարէ մարդոյն ձեւացուցանեմք զգաղափար հսկայի :

Գ. Ամանապէս կարող եմք կազմել զգաղափար ինչ նուազեցուցմամք . որպէս յորժամ՝ ի զաղափարէ մարդոյ ուրոք ձեւացուցանեմք զգաղափար զամացի կամ թզկի :

Դ. Կալսաւոր եղանակն միջական կազմելոյ ՚ի մէնջ զգաղափարս, է այն որ լինի վերացուցմամք : Ա Երացուցումն է՝ ի բաց հանելել զատելքատ այսմ օրինակի . յետ ընդունելոյ իմ զտպաւորմունս առարկայի միոյ, կարեմ մատղիր

լինել այսոցիկ կամ այսպիսեաց տպաւորմանց , ոչ  
ինչ խորհելով զառարկային որ պատճառէ զնոսաւ :  
Առաջ եմք ստանալ յընթացս կենաց զանհուն  
մանաւոր գաղափարս՝ ի զգալի տպաւորմանց ա-  
ռարկացից որք զգածեն զմեզ :

Խորհիմք այնուհետև զատաբար և վերացուց-  
մամք զոմանց յայսոցիկ տպաւորութեանց , առանց  
նկատելոյ յառարկայ ինչ . 'ի թիւ արկանեմք  
սահպ զմանաւոր մարմինս , յորոց յառաջ բե-  
րեմք զգաղափարն թուոց զորոց զմտաւ ածեմք .  
և զորոց տրամաբանեմք վերացուցմամք , ոչ ինչ  
խորհելով զմանաւոր մարմինոյ . որպէս յորժամ-  
ասեմք 2 և 2 առնեն 4 , 1 յաւելեալ առ 5 առ-  
նեն 6 , 2 բաղդատի առ 4 որպէս 4 առ 8 :

Կայնպէս յորժամ զրցց ինչ լինի զտարակացու-  
թենէ երկուց քաղաքաց , ոչ այլ ինչ խնզրի  
բայց միայն երկայնութիւն ձանապարհին , ոչ ինչ  
խորհելով զլայնութենէ նորա , և ոչ զայլ ինչ  
հանգամանաց ձանապարհին :

Վհա վասն այսր գործովութեան մոտաց ասեն  
երկրաշափք , թէ զիծն չունի ինչ զլայնութիւն ,  
և կետն տարածութիւն ինչ . չիք ինչ զիծ նիւ-  
թական առանց լայնութեան , և ոչ նիւթական  
կէտ՝ առանց տարածութեան . սակայն երկրա-  
շափք մոտածեն 'ի զիծն միայն զերկայնութիւն ,  
և զկէտն համարին միայն որպէս եզր ինչ յոր-  
մէ բղիսէ զիծն , կամ այն ինչ առ որ զիծն եզե-  
րի , առանց մոտածելոյ զտարածութենէ այնր ե-

զեր կամ ծայրի . և այս է զոր առեն վերացուց-  
մամբ թէ զիծն ոչ ունի ամենելին զլայնութիւն ,  
և թէ կէտն ոչ ունի ամենելին զտարածութիւն :

Պարտ է նկատել և զայս , եթէ այս ամենայն  
եղանակ խորհեց կամ 'ի ձեռն յիշողութեան  
կամ երեակայութե կամ յաւելման կամ 'նուազ-  
ման կամ վերացուցման և այն , միշտ ենթա-  
դրեն զնախընթաց անմիջական տպաւորմունս :

Կամքն այսինքն կարողութիւնն կամեց և չկա-  
մեց զոր ունիմք , է նոյնպէս յատկութիւն ինչ  
հոգւոյ մերոյ : Փիլխոփայք կոչեն Խղձ զգայական  
զյօժարութիւնն զայն՝ զոր ունիմք առ զգալի  
բարին . և Խորշումն՝ զոր ունիմք յայնմ ամե-  
նայնէ որ մեզ թուի անհաջոյ , և կամ յայնմ ամե-  
նայնէ որ զգալապէս հակադրի երջանկութեան  
և պահպանութեան մերում :

Չորք են գլխաւոր գործողութիւնք մտաց մե-  
րոց , որք պահանջեն զմանաւոր մտադրութիւն .  
Ա . Դաղափարն , ընդ որով իմացեալ լինի նաև  
երեակայութիւն , Բ . Դատումն , Գ . Տրամա-  
խոսութիւն , Դ . Կարք : Վար վերացուցումն է  
որպէս կէտ միաւորութե , ըստ որում հոգի մեր  
ըմբռնէ զվերաբերութիւն առարկայից ունաց  
առ միմեանս . և է սա արտադրեալն 'ի նմանու-  
թենէ անհատից :


Ա . Վար վերացուցումն լինի 'ի ձեռն կիտի  
տեսութեան մտաց , պատճառաւ միակերպու-  
թեան կամ նմանութեան որ ունի առ զգալի

տպաւորութիւնս ումանս և առնել անդրադարձու-  
մըն ինչ առ այն և ընծայէ անուն, ըստ նմանու-  
թեան անուանց որ ընծայի իրական առարկայից .  
զոր օրինակ տեսեալ զբազում անձինս մեռեալս՝  
հնարեալ եմք զանունս Մահ . և անունս այս  
նշանակէ զտեսութիւն հոգւոյն, որ նկատէ 'ի  
ձեռն վերացուցման զվիճակ կենդանւոյն, որ դա-  
դարէ 'ի կենաց :

Ամենայն կենդանիք ունին վերաբերութիւն  
առ միմեանս նկատմամբ այսր վիճակի . և մինչ  
զմնաւ ածէմք զայս վիճակ հրաժարեցուցմամբ  
'ի մասնաւորաց, այս տեսութիւն հոգւոյ է վե-  
րացուցումն ինչ . այնուհետեւ խօսիմք զմահուա-  
նէ իրբե զիրական ինչ առարկայէ :

Իսյց չիք իրական ինչ քան զմամնաւոր էակս  
որք ենթակայանան անկախ 'ի մտաց մերոց . այլ  
ամենայն եզերք նշանակեն զկէտս տեսութեան  
կամ տրամախոհութեան մտաց :

Եզգին որ միանգամեղև ընդհանուր, կարեմք  
զնա առ մասնաւորս մատուցանել 'ի ձեռն սովո-  
րական նմանութեան որում յարմարեմք զբառ  
ինչ, որ նշանակէ զիրական առարկայ . ուստի որ-  
պէս ասեմք հանդերձ Պիետրոսի կամ ձեռն Պի-  
տրոսի, նոյնպէս և ասեմք մահն Պիետրոսի,  
բարութիւն, զիտութիւն, և այն :



Հ/985

## ՅՈՒԴԱՅՈՅ Ե.

Հորեքին դիմաւոր գործողութիւնք մասց :

**Զ**ԱՅՆԻՒՍ միտք իմացեալ լինի աստանօր կա-  
լողութիւն՝ որով ըմբռնեմք և երեակայեմք,  
որ և կոչի Խամացողութիւն։ Ամենայն զգածումն  
հոգւոյ մերոյ որով ըմբռնեմք և երեակայեմք, և  
այն որ կոչի Գաղափար. և է սա ընդհանուր  
եզր ինչ վերացեալ. որ և է կետն այն միաւորու-  
թեան առ որ վերածեմք զամենայն որք ոչ այլ  
ինչ են, բայց սոսկ տրամախոհութիւն մնաց մե-  
րոց։ Քետ այնորիկ մասնաւորապէս մոտադիր լի-  
ցուք գաղափար ձայնիս։ Քորժամ առաջի առ-  
նեմ մնաց իմոց եռանկիւնի ինչ, այս զգածումն  
հոգւոյ իմոց որով առաջի առնեմ ինձ զեռան-  
կիւնին, կոչի Գաղափար եռանկեան։

**Վ**պա գաղափարն է անուն զոր ես ընծայեմ  
առ զգածումն հոգւոյ իմոց որ ըմբռնէ կամ զմուս  
ածէ զառարկայն առանց դատելց վնա։ Քան-  
զի Եթէ ես դատեմ, այսինքն է Եթէ ես խոր-  
շիմ, որպէս թէ եռանկիւնին ունի զերիս կող-  
մունս, ի գաղափարէ անցանեմ՝ ի Գատումն։

**Վ**պա դատումն ևս է եզր վերացեալ. և այս  
անուն տուեալ լինի այնը գործողութեան մնաց,  
որով խորշիմ թէ այս ինչ առարկայ է կամ ոչ  
այսպիսի կամ այնպիսի. ուստի ամենայն գա-

տումն Ենթաղիե զգաղափար . վասն զի հարկ է  
ունել զգաղափար իրին յառաջ քան զխորհեն՝  
թէ է կամու է այսպիսի կամայնպիսի :

Դատումն հարկաւ Ենթաղրե զերկուս դա-  
ղափարս . զգաղափար առարկային զորմէ դատէ ,  
և զգաղափար այնր զոր ինչ դատէ զառարկայէն :  
Դատանի և այլ զործողութիւն ինչ մտաց 'ի դատ-  
ման , որով նկատեմք զառարկայն և դատեմք  
զառարկայէն , առնելով զերկուսին իբրեւ մի և  
նոյն բոլոր . և որպէս բանիս կարդ է ասել , զմինն  
ընդ միւսոյն միաւորեմք :

Առարկայն զորմէ դատեմք , կոչի Անթակայ  
դատման . և յորժամ դատումն բացատրի 'ի ձեռն  
բառից , հաւաքումն այն ամենայն բառից որք  
բացատրեն զգատումն՝ կոչի Ախսաղատութիւն :  
Խակ այն բառք որք բացատրեն զառարկայն դատ-  
ման , կոչին Անթակայ նախաղատութիւն : Այն  
զոր դատեմք զայնր Անթակայէ , կոչի Ատորո-  
գելի . զի զայն ընծայեմք Ենթակային . կոչի  
ևս Ատորոգեալ՝ զի ստորոգեմք զենթակայէ , որ  
զօրութեամք բերէ զնշան կամ զկնիք այնր՝ զոր  
ինչ դատեմք . այսինքն նկատեմք զառարկայն  
որպէս թէ այսպիսի իցէ կամ այնպիսի . ուստի  
և բայն է բառ նախաղատութեամն բացորոշիչ  
ներկործութեան մտաց , որ միաւորէ զստորոգե-  
մն ընդ Ենթակային :

Դայն է էական մասն ստորոգելոյն . զոր օրի-  
նակ Արկիլս է բոլորակ . այս երրեակ բառք

կազմեն զմի նախադասութիւն , այսինքն՝ զբացայացտութիւն ներգին դատման իմոյ , զոր յառաջ բերեմ յորժամ խորհիմ թէ երկիրս և բոլորակ :

Երկիրս է ենթակայ նախադասութեան . քանզի երկիրն է այն՝ զորմէ դատեմ . Ռալորակն ստորոգելի է . և յայսմատորոգելով բայս | ցուցանէ թէ դատեմ զի երկիրս է բոլորակ . այսինքն թէ նկատեմ զերկիրն իբրև զոյող կամ ենթակայացեալ բոլորաձե :

Դատումն է անդրադարձումն ինչ կամ դիտողութիւն որով բացատրեմք զգածմունս ինչ , զոր առարկայքն ներգործեն 'ի մեզ , և ասեմք զոր ինչ զգամք : Աքեղակն է լուսաւոր . այսինքն թէ արեգակն ազգեց յիս զզգացումն լուսոյ : Ը աքարն է քաղցր . այսինքն թէ շաքարն զգածեց վիս քաղցրութեամք իւրով :

Չէ անտեղի նշանակել , թէ ոմանք ընդհանուրապէս զանազանեն զերկուս սեռս դատմանց . զմինն կոչեն դատումն Ատորասական . այսինքն անդրադարձումն զոր ես առնեմ 'ի վերայ այնոր զոր իրապէս զգամք : Ը աքարն է քաղցր . վկայեմ ինձեն թէ շաքարն զարթուցանէ յիս զզգացումն քաղցրութեան : Խակ զմիւսն կոչեն դատումն Բացասական , այսինքն անդրադարձութեամք յիս նկատեմ թէ ես ոչ զգացի և ոչ ընկալայ զտակաւորութիւնն զոր ենթադրէ դատումն ստորասական :

Վայս դատումն նշանակի 'ի խօսակցութեան կամ 'ի նախաղասութեան բացասական մասնըկամքս' Աչ. զոր օրինակ, Շաքարն ոչ է դառն: Յամենայն բացասական դատմունս զոյ ստորասութիւն ինչ. այնու զի ստորասե կամ ստուգե թէ ոչ զգաց:

### ՅՈՒԹԻՎՆՅՈՒՅՆ Օ:

Բացատրութիւն գաղափարի:

Կանագագարք կամ ըմբռնմունք 'ի բազում սեռս զանազանին 'ի փիլտոփայից: Ատացական գաղափարք կոչին, որք անմիջապէս յառաջ գան 'ի մեզ յառարկայից, որպէս գաղափարն արեւու և այլ ամենայն անմիջական գաղափարք: Գան և այլ գաղափարք որք կոչին Ատացածինք. և են այնորիկ զորս առնեմք 'ի ձեռս աճեցուցման կամ նուազման, և այլն. որպէս յորժամերեք ակայեմ զիեառն ինչ ոսկեղին:

Վայն ոմանք 'ի փիլտոփայից թէ գտանին ևս բնածին գաղափարք, այսինքն անդստին ընդ մեզ ծնեալք. բայց եթէ քաջ մտաղիր լինիցիմք այսմ՝ յուշ ածելով զապատմութիւն գաղափարաց մերոց զորս անդստին 'ի մանկութենետ ընկալաք, խելամուտ լինիմք անշուշտ եթէ ամենայն գաղափարք են ստացականք, և թէ չիք 'ի մեզ ընածին գաղափար, բայց միայն տրամադրութիւն

ինչ յաւետ կամ նուազ զօրաւոր առ 'ի ընդունել  
զգաղափարս ոմանս :

Ուստի այս խմաստ թէ Պարտէ հատուցանել  
իւրաքանչիւր ումեք որ ինչ նմա է անկ , ոչ է  
սկիզբն ընածին , այլ ենթազրէ զստացական գա-  
ղափարն . այսինքն զգաղափարն հատուցանելոյ ,  
զգաղափարն պարտուց և զգաղափար իւրաքան-  
չիւր ուրուք . և այսոքիկ են զաղափարք զոր սոտա-  
նամք 'ի մանկութենէ հետէ յընթացս կենաց :  
Այս խմաստ է յաւետ զիւրիմաց , քան զվերա-  
ցեալ համարնաբանական ինչ սկիզբն :

Հարկաւորութիւն պահպանութեան ընկերու-  
թեան՝ և անձնական օգտից մերոց , զիւրաւ  
խելամուտ առնեն զմեզ , թէ ամենայն ինչ վեր  
'ի վայր տապալի՝ եթէ ոչ հատուցի այլում որ  
նմին է անկ : Վարածք զիւրաւ զմեզ ամբառ-  
նան առ ճանաչումն արարչին , և չիք հարկ զի  
զաղափարն Վստուծոյ իցէ բնածին . և եթէ ան-  
կեղծութեամք կամիցիմք յիշեցուցանել մեզը պ-  
պատմութիւն մանկութեան մերոյ , պարտիմք  
խոստովան լինել , թէ ոչ հասու եղաք արար-  
չին , մինչեւ ստացեալ ուղղոյն մերոյ զթանձրու-  
թիւն ինչ , և մինչեւ 'ի միտ առեալ զպատճառս  
և զգործս :

Ա երացեալ զաղափարք որպիսի է գունոց ,  
էակի , ոչնչի , ճշմարտութեան , ստութեան .  
առ հասարակ են արտադրութիւնք ինչ անզրա-  
դարձութեանց մերոց . զայսոսիկ բառս հնա-

բեալ եմք առ 'ի նշանակել զնամնութիւն որ  
գտանի 'ի մէջ ոմանց տպաւորմանց :

Վմենայն սպիտակ առարկայ ներգործէ յիս  
զտպաւորութիւն ինչ նման . իսկ ես զեղանակս  
զայս որով զգածեալ եղէ՝ ըստ իմիք իրացուցա-  
նեմ յորժամ ըմբռնեմ զնոյն ինքն միայն առանց  
մերձեցուցանելոյ ՚ի մասնաւորս , և կուեմ զնա-  
սպիտակութիւն : Խակ զայսոսիկ վերացեալ գա-  
զափարս մարդէ վերածել 'ի կարգս մտացածին  
զաղափարաց :

Դատանին գաղափարք ինչ որք կոչին Պայծառք ,  
և այլ ես որք կոչին Շ փոթք : Պայծառ գաղափարք  
են այնոքիկ զորս ըմբռնեմք զիւրաւ , և միովհայե-  
ցիւք բովանդակեմք զնոսա ըստ ամենայն տարա-  
ծութեան . Ճշդիւ խօսելով չկը գաղափար շր-  
փոթ , բայց եթէ բաղդատութեամք առ գաղա-  
փար ինչ պայծառազոյն զոր ունիմք :

Դաղափարն մարդոյ որ 'ի հեռուստ նշմարի՝  
է պայծառ գաղափար մարդոյ ուրուք նկատելոյ  
'ի հեռուստ . և չէ պարտ դատել զնմանէ ա-  
ռանց 'ի մօտոյ տեսանելոյ զնա . վասն զի հարկէ է  
միշտ մտազիր լինել եթէ դատումն մեր ունիցի  
զիսկական և զյատուկ պատճառ ինչ , յորմէ կա-  
րասցէ զարթնուլ :

Բայց քանզի մեք ունիմք զպայծառ և զլրա-  
ցեալ գաղափար ուրուք զոր տեսանեմք 'ի մօ-  
տոյ , շփոթ կոչեմք զզաղափար այնորիկ զոր տե-  
սանեմք 'ի հեռուստ : Վար յատկապէս խօսե-

լով գաղափարն շփոթ է զաղափար Անդացեալ, այսինքն զաղափար կամ պատկեր ինչ, զորմէ փորձիւ և անդրադարձութեամբ մերով ըզգամք եթէ պակասի իւիք :

**Պ**ատանին զաղափարք որք կոչին Վակեղուտ . զաղափարն մակեղուտ է այն, որ զարթնու 'ի մեզ 'ի պատճառս այլ զաղափարի :

**Հ**յորժամ երկու կամ բազում զաղափարք զարթնուն 'ի մեզ 'ի մի և 'ի նոյն ժամանակի . Եթէ մինն յերկուց անտի զարթնուցու անընդմիջաբար, անդէն զհետ նորա զարթնու և միւսն, և այս յետինս է զոր կոչեմք Վակեղուտ : ( Օրինակ իմն . Եթէ զրոյց ինչ լինիցի զքաղաքէ միոյ յորում երբեմն բնակեալ էաք, պատկեր առարկայի իրիք զօր տեսեալ էաք յայնմքաղաքի, անդրէն նկարի յերեակայութեան մերումն զարթնու 'ի մեզ զաղափար մակեղուտ :

**Պ**ան ևս զաղափարք ինչ որք կոչին ( Օրինական . և են այնոքիկ որք արբանեկեն իբրետիպք կամ նշանք առ այնոսիկ զորս 'ի վերջոյ ստանամք :

Փորձն, այսինքն արտաքին տպաւորութիւնքն զորս ստանամք յառարկայից յընթացս կենաց, և անդրադարձմունքն զորս յետ այնորիկ առնեմք 'ի վերայ այսոցիկ տպաւորութեանց, են երկու որոշակի պատճառք զաղափարաց մերոց, այլ ամենայն կարծիք են առասպել :

**Պ**արտ է ըմբռնել զմարդն որպէս և էն և ոչ

իւկը Ենթաղրութեամբ , որ այն լնքն է պատկերակերպութիւն : Վալսաւոր պատճառն այսպիսի մոլորութեանց յայնմէ , զի զսոսկ վերացեալն կամ զէակն բանի ըմբռնեմք իրը իր + այսպէս Ուալէպրանց համարի զգաղափարն որպէս իրս զատուցեալս և բաժանեալս 'ի մտաց , որ զնոսա ըմբռնե :

Վաղափարըն զատաթար 'ի մտաց մտածեալ , ոչ ևս են էակը . որպէս 'ի մտածել իմում զսպիտակութիւն վերացուցմամբ՝ անկախ յամենայն սպիտակ առարկայէ . և զձե՝ անկախ յամենայն ձեւաւոր առարկայից :

## ՅՈՒՄԱՅՆՈՐ Լ:

Տրամախօսութիւն :

ՈՐՊէՍ ամենայն դատումն Ենթաղրէ զգաղափարս , նոյնպէս ամենայն տրամախօսութիւն Ենթաղրէ զգատմունս : Տրամախօսութիւնն հատատեալ կայ 'ի հերքել , 'ի յառաջ ածել , 'ի մակարերել , և յարտաղրել զգատումն ինչ յայլոց դատմանց կանխաւ ծանուցելոց , կամ մանաւանդ 'ի սպարզել զգատումն զօրմէ է ինսդիրն , իրեւ լոելեայն սպարունակեալ 'ի նոսա . մինչ զի ոչ այլինչ ինսդիրի՝ բայց եթէ յերեսն ածել և բացայայտել զնոյնութիւն ընդ նախընթաց դատմանց :

Այս պաշտօն մասց՝ յորմէ յառաջ զայ դա-  
տումի յայլոց դատմանց, կոչի Տրամախօսութիւն,  
զոր օրինակ .

Եմենայն ոք որ կամիցի ուսանել, պարտի լել,  
իսկ արդ դու կամիս ուսանել,

Եղա պարտիս լել:

Եյս ամենայն դատմունք միանգամայն առեալ՝  
կազմեն զորամախօսութիւն :

Վասնաւոր էակը զարթուցանեն 'ի մեզ զգա-  
զափարս օրինականս . այսինքն գաղափարքն որք  
են տիպք տպաւորմանց զորս զտանեմք նմանս  
կամ աննմանս . զոր օրինակ , զունան լուսնի  
կամ և իցէ մասնաւոր բոլորակի պատճառէ յիս  
զգաղափար օրինական կամ զգաղափար ընդ-  
հանուր բոլորակի . ես ետու անուն ինչ այսմ  
վերացեալ գաղափարի . ես կոչեցի բոլորակ զա-  
մենայն ձես , որոց զիծք ձգեալք 'ի կեզրոնէ առ  
շրջապատն են հաւասարք . ուստի ամենայն ձե՝  
որ վերստին յուշ առնեն ինձ զնոյն գաղափար, լինի  
բոլորակ : Եմենայն առարկայ որ զարթուցանէ  
զնոյն գաղափար , է նոյն բաղզատութեամք ընդ  
այն գաղափարի , այն ամենայն որ է բոլորաձե ,  
է բոլորակ : Բոլորակ ինչ ունի զայն ամենայն  
յատկութիւնս 'ի մասնաւորի՝ որ ինչ միանգամ  
ամենայն բոլորակք ունին ըստ որում բոլորակ :

Կամեցեալ ցուցանելթէ Պետրոս է կենզանի,  
համեմատեմ ընդ գաղափարին զոր ունիմ զՊե-  
տրոսէ և ընդ գաղափարին զոր ունիմ զկենզա-

նւոյ . և տեսեալթէ Պիետրոս զարթուցանէ , յիս  
զգաղափար կենդանւոյն , ասեմ թէ ըստ այսմէ  
նա մինն յայնց անհատից , որք պատճառս տան  
ինձ կազմելոյ զգաղափար կենդանւոյն . և զոր  
ես բացայախեմայսու ձեռնարկութեամբ :

Վմենայն էակ որ ունի զգացումն և զշար-  
ժումն , է կենդանի : Վարդ տեսանեմ՝ զի Պիե-  
տրոս ունի զգացումն և շարժումն , ապա Պիե-  
տրոս է կենդանի :

Վայն որ է , զկարէ լինել և ոչ լինել : Բոլորակն  
է բոլորաձե , և ըստ որումք բոլորաձե ոչ է քառա-  
կուսի , և ունի զամենայն յատկութիւնս բոլո-  
րակի . ուստի Ճշմարիտ և հիմնական կանոն տր-  
րամախօսութեան կամ հաւաքարեանութեան է ,  
զի ենթակայն եզրակացութեան հարկաւ պա-  
րունակեացի 'ի տարածութե ընդհանուր գաղա-  
փարի , առ որ զիմեմք յառաջ բերել անտի զե-  
զրակացութիւն :

## ՅՈՒԹԱՎԾՈՅ Բ.

Հաւաքարանութիւն :

ՀԱՏԱՔԱԲԱՆՈՒԹԻՒՆՆ միշտ բաղկանայ յե-  
րից նախաղասութեանց , որոց առաջինն կոչի  
ՄԵծագոյն , երկրորդն Փոքրագոյն , և երրորդն  
Հետեւութիւն :

Յառաջնում նախաղասութեան ինդրի այն

ինչ որ հաւանութեամբ այնը՝ առ որ խօսիմքն՝  
ունի զյատկութիւնն զորմէ է ինդիրն :

Հերկրորդում նախադասութե՛ բացայայտէ ,  
թէ ենթակայն զորմէ է ինդիրն , է մինն յան-  
հատից պարունակեալ 'ի տարածութեան ընդ-  
հանուր գաղափարի՝ որոյ և այլ ամենայն անհատք  
ունին զնոյն յատկութիւն , յորմէ եղբակացու-  
ցանի 'ի հետեւութեան , թէ ենթակայն զորմէ<sup>1</sup>  
է ինդիրն՝ ունի զնոյն յատկութիւն զորմէ վի-  
ճէին :

Ու ինչ է երկրայելի , թէ ջերմութիւն ըն-  
դարձակէ զօդն . արդ արեգակն է պարունա-  
կեալ 'ի տարածութեան ընդհանուր գաղափարի  
ջերմութեան , ապա արեգակն ընդարձակէ զօդն .  
զի պարտ է նմա ունել զնոյն յատկութիւնս՝ զոր  
ինչ ունի ջերմութիւնն . զի այն որ է իր ինչ ,  
ոչ կարէ միանգամայն գոլ և ոչ գոլ . և վասն զի  
արեգակն պարունակեալ է յընդհանուր գաղա-  
փարի ջերմութեան , հարկաւ ունի զնոյն յատկու-  
թիւնս զոր ինչ ունի ջերմութիւնն :

Այլու առաջին նախադասութիւնքն հաւա-  
քաբանութեան՝ կոչին առաջարկութիւնք . զի  
զնին յառաջքան զհետեւութիւնն : Այլէ երկու  
առաջարկութիւնք իցեն Ճշմարիտ և ընդունելի ,  
հարկ է և հետեւութեանն Ճշմարիտ լինել : Ինդ  
հակառակն՝ եթէ առաջարկութիւնքն կամ մինն  
յառաջարկութեանց չլցէ Ճշմարիտ , յայնժամ  
և հետեւութիւնն լինի սխալական :

Յազում անդամ պատահէր զի մինն յառաջարկութեանց է Ճշմարիտ ըստ իմլիք նկատման , և սուտ ըստ այլ նկատման . յայնժամ հետեւութիւնն է Ճշմարիտ ըստ այնմիմացուածոյ՝ որ առեալ եղեւ յառաջարկութեան , և սուտ՝ ըստ օտար իմացուածոյ այնր առաջարկութեան :

Յայսոսիկ զիպուածս զանազանելի է առաջարկութիւնն , այլ բացասի հետեւութիւն , և զանազանի այսպէս . զոր օրինակ , Եթէ յորժամ է տիւ , և երկինք ծածկեալ են ամպով , կամիցի ոք հաստատել , թէ ժամացոյցն արեւու պարտիցուցանել բզժամն , կազմեսցէ զայս հաւաքաբանութիւն :

Յորժամ արեգակն 'ի վեր է քան զհորիզոն մեր , ժամացոյցն արեւու յայտ առնէ զժամն .

Արդ արեգակն զտանի այժմ 'ի վեր քան զհորիզոն մեր .

Ապա ժամացոյցն արեւու հարկաւ յայտ առնէ զժամն :

Այս հաւաքաբանութիւն թէպէտ և է ըստ կանոնի , բայց սբարտ է զանազանել զմեծագոյնն այսպիսի օրինակաւ :

Յորժամ արեգակն 'ի վեր իցէ քան զհորիզոն մեր և չիցէ ամպ որ արգելուցու զժառագայթս լուսոյ նորա , ժամացոյցն արեւու հարկաւ նշանակէ զժամն . ընդունիմ զմեծագոյնդ :

Յորժամ արեգակն 'ի վեր է քան զհորիզոն մեր , և զուցէ ամպ որ արգելուցու զժառագայթս լուսոյ նորա , և ժամացոյցն արեւու հարկաւ նշանակիցէ

զժամն, ուրանամ զմեծագոյնդ :

Ապա ժամնցոյցն արեւու նշանակէ զժամն, ուր այժմ երկինք ծածկեալ են ամսով, ուրանամ զհետեռութիւնն :

Ա արին՝ ի դպրոցս բազում դիտողութիւնք՝ ի վերայ ձեւոյ հաւաքաբանութեան և ձեռնարկութեանց որոց կիրառութիւն արդ խափանեալէ :

### ՅՈՒԹԻՌԸ

Դիտողութիւնք՝ ի վերայ հիման հաւաքաբանութեան :

Ա. Չոք. ինչ յաշխարհի՝ եթէ ոչ էակ մասնաւոր. Պիետրոս, Պօղոս և այլն, են էակք մասնաւոր. այս անդամնդ այս քար են նմանապէս էակք մասնաւոր. այս գենար և այս ուկի են էակք մասնաւոր, ըստ այսմ են էակք ամենայն ողք կան՝ ի տիեզերս :

Ա ամնաւոր էակքն կոչին՝ ի փիլտոփայից Կնհատ, այսինքն էակք ողք ոչ կարեն բաժանիլ հատմամբ առանց դադարելոյ յէակութենէ որ ինչ ենն : Այս անդամնդ եթէ բաժանեսցի ոչ մինի այն անդամնդ, ոչ ևս ունիցի զնոյն արժողութիւն, ոչ զնոյն կշխ և ոչ զնոյն յատկութիւն. ապա միտք մեր առնէ զդիտողութիւնս՝ ի վերայ անհատից և՝ ի վերայ եղանակի էակութեան նոցին . և այս զիտողութիք, անդրադարձմունք և վերացուցմունք են ողք կազմեն զիարդն հա-

մարնաբանական, և այսոքիկ էակք սոսկապէս  
վերացուցեալք բացատրին բառիւք ըստ նմանու-  
թեան անուանց իրական էակաց : Օ որ օրի-  
նակ յորժամ տեսանեմ զգենար ինչ, նկատեմ  
զձե նորա, զնիւթ, զկշխոն և այն . ըմբռնեմ  
յայնժամ զգաղափար այսր զենարի և յատկու-  
թեանց նորա . ուսանիմ այնուհետեւ սովորու-  
թեամբ թէ ոչ այն միայն զենար գտանի յաշ-  
խարհի, զի տեսանեմ զայլ զենարս, որք զար-  
թուցանեն յիս զգաղափար նախատեսեալ զենա-  
րին և զյատկութեանց նորա, զիտեմ զայն ա-  
մենայն՝ որով զենարքն են նման միմեանց :  
‘Այնպէս նկատեմ’ թէ այս տիպ ոսկի է նման  
այլում, և թէ ունի ևս զյատկութիւնս այլազգ  
’ի յատկութեանց զենարի . ահա քեզ այժմ  
նմանութիւն և զանազանութիւն, որ և այս իսկ  
է, որ տայ պատճառս իմաստասիրաց կոչելց Տե-  
սակ և Աեռ :

‘Դենարն է տեսակ ինչ զբամոյ . այս տիպ ոսկի  
է այլ իմն տեսակ զբամոյ . ապա զբամն է սեռ :  
Ամենայն էակք՝ յորս նկատեմք զհասարակ որա-  
կութիւնս, տան մեզ պատճառս կազմելց ևս և  
զվերացեալ համարնաբանական գաղափար սեռին:  
Աքդ գաղափարն զբամոյ զօր ունիմք, է գաղ-  
փար ընդհանուր՝ բաղզատութեամբ զանազան  
տեսակաց զբամոյ :

‘Ամենայն զբամք նման են միմեանց ըստ որում  
են նիւթք՝ որք նորաստեն մեզ ստանալ զայն ա-

մենայն որոց ունիմք պէտս . բայց 'ի մէջ դրամնց են ոմանկք ուկի , այլք արծաթ և կէսք պղինձ . ոմանք մեծագոյն և ոմանք փոքրագոյն . և ահա յայսմէ զանազանութիւն տեսակաց , և այս զանազանութիւն զոր նկատեմք յանհատս նոյն սեռի , տայ մեզ պատճառս կազմելոց զեզր վերացեալ կամ զտեսակ :

Բ . Առշեմք կենդանի զամենայն անհատս որք ունին զզգացումն . այսինքն շարժին , կեան , ուտեն , և այլն : Այս յատկութիւնք զորս նկատեմք յանթիւ յանհատս , տան մեզ պատճառս կազմելոց զվերացեալ զաղափար կենդանւոյ : Իսկ յորժամ նկատեմք յայսոսիկ կենդանիս զյատկութիւն՝ որք պատշաճին ոչ սակաւ անհատից , զոր օրինակ ոմանկք 'ի կենդանեաց անտիթունին և ոմանք ևս ոչ բնաւ ունին զթես , ոմանք 'ի չորս ընթանան և կէսք 'ի նոցանէտողան , և զի այս յատկութիւնք պատշաճին միայն ոչ սակաւուց ոմանց 'ի կենդանեաց՝ որովք և տարբերին 'ի միմեանց , ապա պատճառս տան մեզ կազմելոց զվերացեալ զաղափար տեսակի կենդանեաց :

Վէտն տեսութեան մտաց՝ որ զինի ստանալոց յընթացս կենաց զըազում զաղափարս , քննէեթէ յատկութիւնքն զորս նկատեաց՝ պատշաճին ամենայն կենդանեաց , կոչի Ուռ :

Վէտն տեսութեան մտաց՝ որ 'ի միասին մտածէ , զյատկութիւնան , որք պատշաճին միայն ու

մանց անհատից սեռին, կոչի Տեսակ :

Աեռն Ենթաղրէ զտեսակ, և փոխադարձաբար տեսակն Ենթաղրէ զտեռ. այլ գիտելարժան է, այն որ է սեռ բաղդատութեամբ ոմանց տեսակաց կարէ մտածիլ՚ի մէնջիբը տեսակ, Եթէ միտ զիցես առաւել ընդհանուր յատկութեանց. զոր օրինակ Եթէ կիտիւ ինչ տեսութեան մտաց, ոչ զայլինչ զիտեսցես յանհամար թիւս անհատից որք Ենն յաշխարհի, բայց միայն զալարգ յատկութիւն գոլց, սպատճառս տայ քեզ կազմել զվերացեալ զալափար էակի. և զանազանութիւնք նկատեալք՚ի մէջ էակացն, կացուցանեն՝ի նոսանցնչափ թուով տեսակս. ուստի կենդանին՝ որ նկատմամբ ամենայն ազգի ազգի կենդանեաց է սեռ, աստանօր լինի տեսակ նկատմամբ էակի. և կենդանին որ նկատմամբ էակի է տեսակ, լինի սեռ՝ նկատմամբ ստորնագունից քան զինքն. վասն զի կենդանին բաժանի՝ի բանական և յանբան :

Քյայսմամենայնէ յայտ է, զի զանազան տեսութիւնք մտաց Են՝ որ կազմեն զայս ամենայն զանազան էակս համարնարանականս :

Հինգ Են ընդհանուրք, այսինքն հինգ Են ազգ վերացեալ զալափարաց, որք նշանակին բացարձակ եզերօք կամ գոյական անուամբ, և Են այսոքիկ. Աեռ, Տեսակ, Տարբերութիւն, Քյատկութիւն և Պատահումն :

## ՅՈՒԹԱՎԵՐ Ժ.

ՆԻՇԵ ՀԱւաքաբանութեան :

ՀԱՏԱՔԱԲԱՆՈՒԹԻՒՆՆ Հարկաւ բաղկանայ  
յերից պարզ կամ բաղադրեալ գաղափարաց :  
Խնդիրն որ 'ի հաւաքաբանութեան՝ լինի եզրա-  
կացութիւն . և բաղկանայ յերկուց գաղափա-  
րաց, որոց մինն կոչի Խնդակայ՝ իսկ միւսն  
Ստորոգեալ :

Խնդակայն կոչի Փոքրագոյն եզր, այսինքն  
փոքր ծայր ստորոգեալ եզրակացութեան, այս-  
պէս անուանեալ վասն ստորոգելոց նորա զենթա-  
կայէն. կոչի Ուժագոյն եզր, այսինքն մեծ ծայր,  
զի կարէ ասիլ զբազմագոյն յոյժ անհատից :

Դաց յերկուց աստի գաղափարաց զիմեմք առ  
երրորդ ինչ, որ կոչի Ուխնորդ եզր . զի այսու 'ի  
մէջ անկեալ երրորդ գաղափարաւս գտանեմք,  
թէ արդեօք ստորոգեալն յեզրակացութեան՝  
իցէ պատշաճեալ կամ ոչ պատշաճեալ ենթա-  
կայի այսր եզրակացութեան :

Հակն ամենակարող է երկրագելի .

Մստուած է էակ ամենակարող .

Մպա Մստուած է երկրագելի :

Մստուած՝ է ենթակայ նախաղասութեան .  
Երկրագելին՝ է ստորոգեալ . էակն ամենակա-  
րող՝ է միջնորդ եզր :

Ամենայն մարդ է սխալական :

Խակ դու ես մարդ .

Դպա և դու ես սխալական :

Դու՝ է ենթակայ եզրակացութեանն , ուստի և փոքրագոյն եզր . սխալական՝ է ստորոշեալ . ամենայն մարդ՝ է միջնորդ եզրն , կամ միջնորդ գաղափարն :

## ՅՈՒԹԱԾՈՅ ԺԵ.

Հիմն հաւաքաբանութեան :

ՈՐՊԵՍ 'ի բնաբանական կարգի չէ մարթ արտադրել 'ի մարմնոյ բայց միայն զայլ և այլնիւթողք 'ի մարմին անդր պարունակին , նոյնպէս և 'ի համարնաբանական կարգի չէ մարթ յառաջըերել զգատումն ինչ , և հետևութիւն յայլմէ դատմանէ , եթէ այն հետևութիւն կամ դատումն ցիցէ յառաջըերեալ այլովք եզերօք . կամ որպէս սովորաբար ասի , թէ պարտ է զի մեծագոյնն կամ ընդհանուր նախադասութիւնն սլարունակեսցէ զեզրակացութիւն , և փոքրագոյնն ցուցցէ թէ այն եզրակացութիւն է պարունակեալ 'ի մեծագոյնն . ուստի այս նոյնութիւն է միակ ձևարիտ հիմն հաւաքաբանութեան :

Օ ի թէպէտ և եզրակացութիւնն է այլովք եզերօք , այլ նոյն դատումն է յառաջ բերեալ 'ի մեծագոյնն միակ այլով նախադասութեամբ .

զի մեծագոյնն է յաւետ տարածագոյն և առաւելընդհանուր քան զեզրակացութիւն . ողպես դիւրին է քեզ տեսանել յօրինակող որ զինի :

Խակն ամենակարող է երկրպագելի .

**Ա**յսոտուած է էակ ամենակարող .

**Ա**յսա Այսոտուած է երկրպագելի :

Այսա այս եզրակացութիւն, Այսոտուած է երկրպագելի՝ է հիմն նոյն այնր դատման, [թէ էակն ամենակարող է երկրպագելի . զի արդարեայս նախադասութիւն Խակն ամենակարող է երկրպագելի , պարունակէ զայն, [թէ Այսոտուած է երկրպագելի . վասն զի Այսոտուած միայն է էակ ամենակարող :

Փոքրագոյնն նապաստէ միայն առ 'ի ցուցանել, [թէ հետեւութիւնն պարունակեալ է 'ի մեծագոյնն . զի յասելն, Այսոտուած է էակ ամենակարող, զհետ զայ [թէ որ ինչ ասացաւ զամենակարող էակէ , նոյնն ասի և զԱյսոտուծոյ :

**Ա**մենայն մարդ կարէ խարիլ .

**Ա**րդ և զու մարդ ես .

**Ա**յս զու ևս կարես խարիլ :

Այս նախադասութիւն պարունակէ յայտնապէս զայն, [թէ զու մարդ ես և զի յայտ է . [թէ մարդն՝ է բառ ընդհանուր, որ պարունակէ զամենայն անհատ մարդոյ, ուստի զայն ամենայն՝ զոր ասեմ զմարդոյ ըստ որում մարդ, ասեմ և զքէն. ապա յասել իմում [թէ ամենայն մարդ կարէ խարիլ, արդէն ասացի զքէն, զու ևս կարես խա-

քիլ, զի դու ևս մարդ ես . ըստ այսմիմացուածի՝  
դու պարունակեալ ես 'ի զաղափարն օրինա-  
կան՝ զոր ունիմ զմարդոյ . որպէս բոլորակն 'ի  
մասնաւորի պարունակեալ է յօրինական զա-  
ղափարն , զոր ունիմ զբոլորակէն ընդհանրապէս :

**Այս նիւթ տարածեալ՝ յայն սակս կոչի յի-  
նէն բոլորակ , զի զարթուցանէ յիս զտպաւորու-  
թիւն ինչ համաձայն օրինական զաղափարին ,  
զոր ստացեալ եմ զբոլորակէ յընթացս կենաց :**

## ՅՈՒԹՈՒՄՆԵՐ ԺԲ.

Կանոնիք հաւաքարանութեան :

**Վեջ այնպէս թուին թէ այլեայլ բառք**  
սպատճառեն 'ի մեզ զայլեայլ զաղափարս . սա-  
կայն եթէ իմաստքն զորս տամք բառից իցեն քա-  
ջայարմարք , յայտ է թէ և բանն բացատրեսցի  
այլովք եզերօք , հասարակօրէն իմացեալ լինի  
մի և նոյն իր . ուստի ձայնիւս **Ամենակարող**  
**էակ իմանամք զլուտուած** , յորմէ մարթ է  
եզրակացուցաննել , թէ 'ի խստութեան բանի  
միայն երկու եզերք են 'ի հաւաքարանութեան .  
և թէ ըստ իմիք նկատման եզրակացութիւնն է  
նոյն նախադասութիւն . որ ինչ մեծագոյնն է , զի  
էակն ամենակարող է երկրագելի , և աստուած  
է երկրագելի , ըստ ինքեան մի և նոյն ինչ է .  
յայսմսկզբանն է յաւաջքերին կանոնքս , որք ա-  
ւանդին 'ի դպրոցս 'ի վերայ հաւաքարանութեան :

ԿԱՆՈՒ Ա.

Ո՞իջնորդ եզրն , այսինքն բառքն ողք բացատրեն զնա , գոնէ մի անգամ պարտի ենթադրիլ ընդհանրապէս :

Բացատրութիւն .

Ո՞իջնորդ եզրն է գաղափարն , որում պարտ է պարունակել զենթակայն եզրակացութեան . այլ ոչ կարէ պարունակել , եթէ ցիցէ ենթադրեալ ընդհանրապէս . զոր օրինակ՝

Ո՞մն մարդ է խմաստուն .

Ո՞մն մարդ է փարթամ .

Վառ ո՞մն փարթամէ խմաստուն :

Վառս մարդ 'ի մեծագոյնն և 'ի փոքրագոյնն առեալ են մասնաւորապէս , և որովհետեւ յերկաքանչփոք նախաղասութիւնն նշանակէ զզանազան վիճակս մարդկան , ոչ կարէ պարունակել զենթակայն եզրակացութեան , կամ հսկիլ առ այն . վասն զի մասնականն ոչ պարունակի 'ի մասնականն , այլ յընդհանութիւն :

ԿԱՆՈՒ Բ .

Եղելքն ոչ պարտին ընդհանրագոյն ենթադրիլ յեզրակացութեան , քան զոր իցեն ենթադրեալ 'ի յառաջարկութիւնն :

Բացատրութիւն .

Որովհետեւ մեծագոյնն պարտի պարունակել զեղրակացութիւնն, զի մասնաւորն ոչ կարէ պարունակել զընդհանուրն, յայտ է զի եթէ եղեղքն եղրակացութեան ենթադրեսցին ընդհանրապէս յեղրակացութեան, և մասնաւորապէս՝ ի յառաջարկութիւնն, տրամախօսութիւնն լինի սուտ, որպէս յայտ է յայսմանէ . Ոմն է սեաւ, ես եղրակացուցանեմ, ապա առենայն մարդ է սեաւ :

ԿԱՆՈՆ Գ .

Ու ինչ եղրակացուցանի յերկուց բացասական նախադասութեանց :

Բացատրութիւն .

Բացասական նախադասութիւնք պարունակեն միայն զբացասութիւն իրին զոր բացասէ . ուստի չէ մարթ յառաջբերել յայսմանէ զայլին բացասութի . յայսմանէ՝ թէ Պետրոս չունի տասն ոսկի, ոչ հետեւի թէ Պետրոս ոչ ունի միտս . դարձեալ՝ ի միոյ բացասական նախադասութենէ ոչ կարես արտադրել զեղրակացութիւնինչ ստորասական . զոր օրինակ թէ Պետրոս ոչ է փարթամ, ոչ հետեւի թէ իցէ իմաստուն : Ապանիացիք ոչ են պարակաղեն .

Պարաիկք ոչ են քրիստոնեայ .

Ապա սպանիացիք ոչ են քըիստոնեայ :

Յայտնի տեսանի , թէ հետեւութիւնն ոչ պարունակի 'ի մեծազոյնն :

ԿԱՆՈՒ Դ .

Ու հետեւ յերկուց ստորասականաց եղբակացութիւն բացասական :

Բացատրութիւն :

Կախադասութիւնն է բացասական , յորժամ ոչ տեսանեմք նոյնութիւն ինչ՝ ի մէջ ենթակային և ստորոգելցն . այլ ընդ հակառակն տեսանեմք անդ զանազանութիւն ինչ և դիմամարտութիւն : Իակ ընդհակառակն , նախադասութիւնն է ստորասական , յորժամ տեսանեմք զի ենթակայն և ստորոգեան են բոլորովին նոյն . արդ եթէ եղբակացութիւնն իցէ բացասական , ոչ կարէ լինելնոյն ընդ մի կամ ընդ երկուս ստորասական նախադասութիւնս :

ԿԱՆՈՒ Ե .

Եթէ մին յառաջարկութեանց է մասնաւոր , եղբակացութիւնն պարտ է լինել մասնաւոր , և եթէ մին յառաջարկութեանց է բացասական , եղբակացութեն ևս պարտ է լինել բացասական . վասն այսորիկ առած է՝ ի դպրոցս , եթէ եղբակացութիւն միշտ հետեւի տկարազոյն մասին :

Բացատրութիւն :

Որովհետեւ հարկ է եղբակացութեան պարունակիլ յառաջարկութեան անդ , և զի ոչ կարէ տարածագոյնքան զառաջարկութիւնն լինել , արդ լինի տարածագոյն յորժամինքն իցէ ընդհանուր , և մին յառաջարկութեանց մասնաւոր + դարձեալ ոչ է մարդ ստորասել , յորժամ մին յառաջարկութեանց իցէ բացասականը նոյն բանի :

Յայսմկանոնէ զհետ գայ , թէ նախադասութիւնն որ եղբակացուցանէ զընդհանուրն , կարէ եղբակացուցանել և զմասնաւորն . զոր օրինակ թէ ամենայն մարդ ունի հոգի , ապա Պետրոսն ևս ունի հոգի : Ի՞նչ նախադասութիւնն որ եղբակացուցանէ զմասնաւորն , ոչ վասն այնորիկ կարէ եղբակացուցանել և զընդհանուրն , քանզի զանազանին 'ի միմեանց մասնաւորն և ընդհանուրն , որպէս յայտ է օրինակէս . Վանդի ոմանքը 'ի մարդկանէ են սեաւ , ոչ հետեւի թէ ամենայն մարդիկ իցեն սեաւ :

ԿԱՆՈՆ Զ.

Ոչ ինչ եղբակացուցանի յերկուց մասնաւոր նախադասութեանց և երրորդ իմն նախադասութիւն + որպէս թէ Պետրոսն է զիտուն , և Պօղոսն իմաստուն , ոչ հետեւի թէ Յովհաննէս իցէ իմաստուն կամ զիտուն :

## Ранг шахматиста [Ранг: 5]

Ուստի ամսնաւոր նախադասութիւնք՝ ասին զմանաւոր առաջարկայից զորս բացատրեն. ապա չէ պարտ մերձեցուցանել զնոսա առ այլ առաջարկայս զորոց ոչ ինչ ասին. ապա մեծագոյն ինչ մասնաւոր՝ որ ասի զմանաւոր առաջարկայէ՝ ոչ կարե պարունակել զհետեւութիւն ինչ այլ՝ ինմաննէ :

## ՅՈՒՆԱՆԵՐ ԺԳ.

Ամսագույն թիւնը

ԱՅՆ ամենայն որ ինչ արտաքոյ է կանոնաց ,  
ոչ է ուղիղ . ապա հարկ է ձանաչել զկանոնս առ  
՚ի կարող լինելոց ասելթ է այս ինչ կամ այն նա-  
խադասութիւն ոչ է ուղիղ . զնոյն իմաս և վասն  
ձեռնարկութեան . վասն այսորիկ հարկ է գի-  
տել զկանոնս առ . ՚ի քաջ լուծանել զսուտ տրամա-  
խօսութիւն ինչ :

Ա. Վինն՝ի զլսաւոր զիտելեաց է այս, զի  
ամենայն դատումն պարտ է նախապես զար-  
թնուլ յարտաքին ինչ պատճառեւ և այն արտաքին  
պատճառին հարկ է լինել յատուկ և որոշակի  
պատճառ այնը դատման, իսկ ամենայն դատումն  
հարկաւ պարտ է ունել զիւը յատուկ շարժառիթ.  
ուստի վիպասանութիւն ինչ որ պատմէ զգործոց  
յառաջ քան զբաղում դարս եղելոց, ոչ է ար-

ժանահաւատ , եթէ ցիցէ հիմնեալ՝ի վկայութիւն ժամանակակից հեղինակաց . և այն վկայութիւն տակաւին կարօտանայ քննութեան :

բ . Տրամաբանութիւնն է ներքին ինչ , և ոչ է մարդ տրամաբանելը այց եթէ զյատուկ գաղափարաց . վասն այնորիկ 'ի կարգի տրամաբանութեան հարկ է միշտ պահել զնոյն գաղափարա . քանզի այն որ ինչ է ձշմարիտ ըստ միոյ գաղափարի , ոչ է ձշմարիտ ըստ այլում . ուստի յորժամ տրամաբանեմք ընդ ումեք , պարտիմք զգուշութեամք դիտել թէ արդեօք ունիցի՞ն ազնոյն գաղափարա զոր մեքս ունիմք . և թէ ըդքառս զորս վարեմք իմացի՞ն նովին իմացուածով որպէս մեք իմաննամք :

Օ այս զգուշութիւն պարտ է առնել մանաւանդ յեռանդագին վէճն , տալով միշտ որոշակի զնոյն իմացուածս բառից զորս վարենն . զի իմացուածն զոր տաս բառին առեալ ըստ իմիք նշաննակութեան , չէ ձշմարիտ յորժամ առնուս զնոյն բառ ըստ այլ նշաննակութե . վասն այսորիկ յայսպիսի դէպս բարիոք է սահմանել զեզերս բառից , և միաբանիլ 'ի նշաննակութիւն նոցա :

Վիրք մեր են իրքեւ զունաւոր ապակիս , որք այլազգ տան մեզ տեսանել զառարկայս , զորս ոչ այնպէս տեսանէաք՝ եթէ էաք 'ի հանդարտութե մտաց . ապա պարտիմք զգուշանալ՝ի կրից մերոց եթէ կամիմք ունել ողջամիտ գատումն :

Վախաղատութիւնքն՝ այսինքն դատմունքն՝

զոր՝ ի մանկութենել, չետեւ ստացեալ ունիմք, ողբ չեն յառաջեկեալ՝ ի քննութենել, բազում անդամ՝ ի մոլորութիւն արկանեն զմեզ : Դիտողութիւնքս այսոքիկ զոր արարաք, նպաստեն մեզ՝ ի լուծանել զնորութիւն իմաստակութեանց :

Իմաստակութիւն ասելով իմացեալ լինին տրամաբանութիւնք ինչ մանուածոյք, որոց ստութիւնքնին ՚ի յայտ զան, բայց դժուարին է յոյժ բացայայտել և ասել ճշգիւ, թէ ընդէր տրամաբանութիւնն այն սուտ իցէ և պատրողական :

### ԽՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Ա.

Երկդիմութիւն բառից կամ հոմանունութիւն :

Իմաստակութիւնն որ կայանայ յերկդիմութիւն բառից, կոչի՝ ի փիլխոփայից Վերականական խարեւութիւն . զոր օրինակ,

Համաստեղութիւն ինչ Առիւծ յերկինս .

Խակ արդ առիւծն է մոնզող,

Ապա յերկինս է համաստեղութիւն ինչ մոնզող :

Այսութիւն ձեռնարկութեանս է յերկդիմութեան առիւծ բառին . այս խարեւութիւն կոչի հոմանունութիւն . քանիզի յառաջին նախադասութեան բառն առիւծ՝ նշանակէ սոսկապէս զանուն ինչ, որ տուեալ լինի մամնաւոր համաստեղութեան իմիք . իսկ ընդ հակառակն յերկրորդ նախադասութեան՝ առիւծն նշանակէ զտեսակինչ կենդանւոյ՝ որ մոնչէ :

Ուստի այս ձեռնարկութիւն ունի եզերս չորս  
v. . Համաստեղութիւն ինչ երկնից .

բ. . Արիւծն առեալ է իրքեւ սոսկ անուն , որ  
ընծայի այնմ համաստեղութեան .

գ. . Արիւծն ենթադրի փոխանակ կենդանւոյ .

դ. . Ո՞ւնչող :

Արդ ձեռնարկութիւն ինչ ոչ պարտի ունել ե-  
զերս առաւելքան զերիս . այսինքն և , Ենթա-  
կայ եզրակացութեան . բ. , Մտորոգեալ եզրակա-  
ցութեան . գ. , Կառն որ բացատրէ զօրինակական  
գաղափարն , որով բաղդատեալ լինի ստորո-  
դեան ընդ ենթակայի եզրակացութեան . որ-  
պէս զի այնու ակն յանդիման երեւեսցի , թէ  
արդեօք այս ենթակայ պարունակիցի յայն միջ-  
նորդ կամ յօրինակական գաղափարի , և թէ  
իցէ նոյն ընդ նմա :

Ուկն կըծէ .

Խոկ մուկն է միավանկ .

Ապա միավանկն կըծէ :

Դիմուրին է տեսանել յայսմ ձեռնարկութեան  
զնոյն խարեւութիւն զոր ինչ՝ ի նախընթացն . զի  
մուկն է առեալ աստ յերկուս այլեւայլ իմացուածու  
Ուարդն խորհի .

Խոկ մարդն է բաղկացեալ՝ ի սեռէ և՝ ի տարբե-  
րութենէ .

Ապա սեռն և տարբերութիւն խորհին :

Խարեւութիւն այսը ձեռնարկութեան կայանայ  
յայն , զի՝ ի բնաբանական կարգէ անցանէ՝ ի  
կարգ համաբնաբանական :

Վարդ մարդն՝ ի բնաբանական և յիրական կարգի խորհիւ բայց ստոյգ իմն է, թէ մարդն ունի զհասարակ յատկութիւնս պատշաճեալս ամենայն կենդանեաց. և այս հասարակ յատկութիվ կոչին սեռ: Ունի ևս զմասնաւոր յատկութիւն որովք որոշի յայլոց կենդանեաց, և այս յատկութիւնք կոչին տարբերութիւն: Վայս սեռ և այս տարբերութիւն, որ ոչ այլ ինչ են բայց եթէ էակք համարնաբանականք, այսինքն պարզ տեսութիւնք մնաց, ոչ են նոքա մարդ բնաբանական զի խորհիցին. ուստի եզրակացութիւնն ոչ է պարունակեալ՝ ի մեծագոյնն:

Վատուած է ամենուրեք.

Խակ ամենուրեքն է մակրայ.

Վպա Վատուած է մակրայ:

Եսյսմձեռնարկութեան բառս ամենուրեք՝ յառաջնումն առեալ է ըստ իւրում նշանակութեան, այսինքն Վատուած է յամենայն տեղիս. իսկ յերկրորդումն առեալ է քերականօրեն, և ըստ այսմ ամենուրեքն է սոսկ բառ:

### ԴՄԸՍՏԱԿՈՒԹԻՒՆ. Բ.

Անդխոռութիւն ենթակային:

Վայս խմաստակութիւն յառաջ զայ յանզիտուէ ենթակային, մինչ ցուցամսի լըդէմ հակառակորդին այլ ինչ քան զոր խնդրէ, կամ այն զոր ոչ ուրանայ, և կամ զայն ամենայն որ օտար է՝ ի խնդրոյն. և

այս է , զոր յատկապէս կոչեմք ։ Ալ՝ փոխանակ որով ։ :

Վայս ազգ իմաստակութեան յաճախ յոյժ սպատահի ՚ի խօսս , ՚ի վիճաբանութիւնս և ՚ի վիպասանութիւնս . ուր բազում անգամ եռանդագինց ցուցանի այն ինչ՝ որ ոչ վերաբերի ՚ի խընդիրն զորմէ է բանն : Վազմապատիկ օրինակք սուրին տեսանին ևս յուսումնական գիրս :

Կատակերգակք յաճախ ՚ի կիրարկանեն այս սլիսի խաբէական տրամախօսութիւնս , որք ոչ այլ ինչ խորհին , բայց եթէ տալ զբօսանս ՚ի զընին եղելոց : Կայ օրինակ սորա յերրորդում վարագուրի հինգերորդ գործոյ Վագահին Ոօլիեռի :

Վրբակոն ամբաստանէ զլլ ալէռ ծառայն , իբրու թէ գործեալիցէ նա մեծեղեռն յանցանս՝ որ սկիսի չիցէ ոք արարեալ երբէք յաշխարհի : Կակ Ալէռ կարծելով զի ամենայն ինչ յայսնի է Վրբակոնի չուրանայ զիրն : Կայց Վրբակոն խօսեր զարծաթոյն զոր ՚ի նմանէ գողացեալ էր . և Ալէռ կարծէր խօսել զլլ զիսեայ՝ զսիրելոյ իւրմէ , որ էր գուստը Վրբակոնի :

Կայ և այլ օրինակ ՚ի դատախազնն Ոասինի , ուր կոմսուհին Վեմպէշ կարծէ զանձնէ , թէ համարին զինքն մոլեզնեալ արժանի կապանաց , մինչ անխարդախ մնոք խորհ՛ուրդ տային նմազնալ և անկանել յոտս դատաւորին :

Ա . Օ զուշութիւնն զոր պարտ է առնել ընդդիւմամիմաստակութեան , է բայցորոշել զհան :

գամանս առաջիկայ խնդրոյն և հեռի կալ ամենայնիւ 'ի հոմանունութենէ բառից և խմաստից :

Բ. Եթէ հանգամանք խնդրոյն է բացորոշ, և հակառակորդն հրաժարի յընդունելութենէ նորա, պարտ է փոյթ ունել 'ի յիշեցուցանել զայն վերստին :

## ԽՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Գ.

Կրկնումն սկզբան :

Ա նախընթաց խմաստակութեան պատասխանէ զայլեայլ իրաց զորմէ ոչ է խնդիրն. իսկ ընդ հակառակն յայսմ մասին՝ կրկնէ զնոյն բան այլովք եզերօք զորմէ է խնդիրն : Օ ի՞նչ է զեղեցիկն. է այն որ ինչ հաճելի է, կամ որպէս ասեն ոմանք 'ի հնոց, թէ է այն՝ որ վայելուն է . ահա իսկապէս կրկնումն սկզբան . զի նոյն իրն առաջի զնի այլովք եզերօք բայց նովին նշանակութէ : Վոլիեռ յիւր յերեակայեալ հիւանդն տայ հարցանել, թէ “ Խողեր ափիոնն պատճառէ զքուն,,” պատասխանէ . “ Ա ասն զի ունի զքնարեր զօրութիւն,,” : Եհա տեսանես զի այս պատասխանի տարբեր եզերօք նշանակէ զնոյն բան զորմէ է խնդիրն : Եյն որ հարցանէ , թէ ընդէր ափիոնն պատճառէ զքուն , քաջ զիտէ թէ ափիոնն ունի զքնարեր զօրութիւն . բայց խնդրէ ուսանել թէ ընդէր ունի զայս զօրութիւն :

Ծնդէր զինին արթեցուցանեւ, կամ ընդէր ունի զարթեցուցիւ զօրութիւն. այս հարցումն մի և նոյն է ընդ վերնոյն. ուստի որ 'ի սոցանեւ պատասխանի իցէ կամ հարցումն՝ չկը իմանալ:

Բայց է բացորոշ պատասխան՝ առ խնդիրն, զիմելյակիզեն խնդրոյն, որպէս յառաջն հարցաւ:

Համբակք յուսանելանդ զզրաբառ լեզուն սովորաբար այսու ախտանան: Վանզի եթէ հարցանիցեն ցնոսա. յորժամ ասի լոյս արեռ. ընդէր արեռն է սեռական, պատասխանեն, թէ զի է ըստ քերականական կանոնին, զիքք Պիտրոսի. որ է կրկնումն սկզբան. զի Պիտրոսն ևս ընդէր դնի սեռական: Լաւ ևս էր պատասխանել որպէս ինձ թուի, թէ արեռն՝ է սեռական. զի բացորոշէ զոյսն, և զի յատկացուցանեւ զնշանակութիւն նորա:

Լոյսն նշանակէ զոր և իցէ լոյս, բայց եթէ յաւելուս զբառն արեռ առ լոյսն, բացորոշես զտարտամնշանակութիւն լուսոյ առ միայն լոյսն արեռ, այս պաշտօն է սեռականին 'ի զբաբառն, զի դնի 'ի սեռական հոլով անուն ինչ, որով բացորոշեսցի յայլմէ ամենայնէ:

Վոյնպէս է և յառաջիկայ օրինակիս. Վիրեմ զաստուած, ասիցես, ընդէր զԱստուածն է հայցական. տան պատասխանի, թէ վասն զի Վիրեմ խնդրէ զհայցական հոլով. այս է արգարեկրկնումն սկզբան. վասն զի ասելն զԱստուած

Է 'ի հայցական հոլովէ եղեալ զկնի սիրեմին . և  
ասելն սիրեմն ինսդրէ զՀայցական հոլովս զԱՇ  
է նոյն ամենեին . ուր փոխանակ զի պարտ էր  
ասել , թէ հայկական բառք հոլովին և փոփո-  
խին 'ի սկիզբն կամ 'ի վերջն , առ 'ի նշանակել  
զգանազան տեսութիւնս՝ ընդ որովք միտքն մը-  
տածէ զնոյն առարկայ . և թէ փոփոխումն հայ-  
ցականութեան է յատկացեալ առ բացորոշ ցու-  
ցանել , թէ անունն 'ի հայցական հոլովէ եղեալ  
է եզր կամ առարկայ զգածման կամ ներգործու-  
թեան զոր բայն պահանջէ . ուստի հայցական հո-  
լովս զԱՄՈՒԱՃ ցուցանէ թէ աստուած է եզր  
ներգործութեան սիրոյ իմոյ , այսինքն թէ սա է  
այն զոր սիրեմ :

Յոռի ցըջան :

Վա ևս է կրկնումն սկզբան , և է տեսակ ինչ  
արատաւոր ձեռնարկութեան՝ յորում յառա-  
ջազոյն ենթադրի այն՝ զոր պարտ էր ապացուցա-  
նել , և յետ այնորիկ այն որ ենթադրեցաւ . ապա  
ցուցանի այս այնու զոր համարին ապացուցեալ  
'ի ձեռն առաջին ցուցանելի ենթադրութեան .  
որպէս համարնաբանք ոմանք ցուցանեն զԱՄ  
տուած 'ի ձեռն արարածոյ , և ցուցանեն զարա-  
րածս 'ի ձեռն զաղափարի՝ զոր ունին զաստուծոյ .  
ևս և որք ցուցանեն զգոյութիւն մարմնոց 'ի ձեռն  
հաւատոց :

## ԻՄ ԸՆՏԾԱԿՈՒԹԻՒՆ Դ.

Սուտ ենթադրութիւն :

Եղոլովակի բնական իմն անկեղծութեամբ կարծի , թէ ցիցէ մարթ խարիւ՝ ի պարզամիտ և յանշահասեր անձանց , ոչ ածեալ զմտաւ՝ թէ բազում անգամ՝ ի նոցունց իսկ խարեալ իցեն նախ և առաջ . ուստի զոր ինչ միանգամ ասեն նոքա ենթադրեն լինել ճշմարիտ , զի նպաստէ իսկ ծուլութեան մերում , և զերծ կացուցանէ զմեզ ՚ի տաժանամնէ քննութեան : Բայ այսմ խարեցան նախնիք հաւատոս ընծայելով առասպելեացն Փիւնիքսի և ՚Ղեմոռայ , և այլ բազում խառնաղանձ զրուցաց՝ որովք լի են մատեանք :

Պատահէ յաճախ ըստ այսմ իմաստակութե , զի փոխանակ խոստովանելոյ ումեք զիւրն տղիտութիւն , ճգնի ցուցանել զգոյն այլով չգոյիւ . որպիսի է պատմութիւն կարծեցեալ ոսկի ատաման :

Շաղակրատ ոմն ՚ի ժէ դարու հռչակ հարկաներ ընդքաղաքս վասն երիտասարդի ուրումն ատամն ոսկի ունել : Փիլխոփայք այնր ժամանակի յօրինեցին ճառս ՚ի ցուցանել զայս , եղեալ թէ մարթ է նիւթոյն կազմակերպիւ յատաման այնր երիտասարդի նույն եղանակաւ՝ որպիս կազմակերպի յոսկեհանս : Ո իրաբոյժ ոմն ճարտար յանդիման արար՝ թէ այն կարծեցեալ

ոսկի ատամն , և ատամն պատեալ 'ի թիթղանեւ-  
ուկւոյ , և արհեստիր մածուցեալ 'ի նստերս :

( Երինակս այս ուսուցանե , թէ չէ պարտ բա-  
ցատրել զպատճառն գործոյն յառաջ քան ստու-  
գելիրին . զի նախ պարտ է քաջ ստուգել , թէ  
իցէ արդեօք գործն այնպէս , որպէս կարծի լինել :

### ԽՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Ե .

Ոչ պատճառ փոխանակ պատճառի :

Այժել պատճառ ինչ որ չիցէ պատճառ :

Ոչ ինչ առաւել դժուարին է մարդկեղենն մը-  
տաց քան յերկբայս լինել և ասել . Զգիտեմ ,  
մինչեւ ունիցի զգիպողն շարժառիթ , զոր են-  
թաղրէ դատումն . ուստի յորժամտեսանեն՝ զի  
պատահի գործ ինչ , զորոյ զպատճառն ոչ զի-  
տեն , յայնժամ փոխանակ պարզապէս խոստո-  
վանելոց զբնական տգիտութիւն իւրեանց և զսահ-  
ման մարդկային ձանաշման , ըմբռնեն զգործն  
իբրև պատճառ , կամ զայն որ յառաջանայ քան  
զգործն , և չունի ինչ վերաբերութիւն առ այն .  
կամ զայն՝ որ զուգընթանայ 'ի նմին ժամանակի ,  
բայց չունի զբնական կապակցութիւն ինչ ընդ  
այնմ գործոյ :

Կազում անզամ պատահէ զի յետ զիսաւոր  
աստեղաց երևելոց յերկինս , պատահէն դժնդակ  
արկածք 'ի մարդիկ , այսինքն ժամանախտ կամ  
սով և կամ մահ իշխանի ուրուք : Այս զիսաւորք

ոչ ունին զընաքանական կապակցութեն ընդ այն սփախի դժբաղդ պատահմանց, սակայն ռամփկը համարին զգիաաւորս պատճառ թշուառութեցն, որ է իմաստակութիւն ռամփական :

**Տեղայ** անձրեւ զինի ծննդեան կամլրման լուսնի . ուրեմն ծնունդ լուսնի է պատճառ անձրեց . ոս ևս է մոլորութիւն ռամփական :

**Վագրէն** ակներեւ տեսանի զինի անհամար փորձից, թէ լուսինն ոչ ներգործէ 'ի վերայ հողագնտոյս զայսպիսի ընական գործս, զոր նմա ընծայեն ռամփկը՝ և թէ անօգուտ է դիտել զքառորդս լուսնի 'ի սերմանելև 'ի մշակել ըզտունկս, որպէս և 'ի փոփոխումն եղանակին . տես 'ի **Կունդինեայ** տնկաքանութեանն և 'ի զեղեցիկ ձառին որ 'ի վերայ կարծեցեալ ազդեցութեանց լուսնի :

**Հին** հռովմայեցիք ոչ սկսանեին գործ ինչ առանց հարցանելոյ զգիս 'ի ձեռն հաւահմայից, առ 'ի զիտել, թէ ձեռնարկ գործոյն իցէ բարերաղդ կամ դժբաղդ . յայտ է զի թռիչք թրոշոց, և այլ գործք այսպիսի կենդանեաց ոչ ունին զհարկաւոր կապակցութիւն ինչ ընդ ապագայ դէպս . սմին իրի ոչ կարեն պատճառ լինել այնորիկ և ոչ իսկ նշան . ուստի եթէ յաջող և կամ ձախող էին հաւահմայից բանք, էր մոլար տըրամաքանութիւն ակնունել անտի բարերաղդ կամ դժբաղդ պատահմանց :

**Յորժամ** **Աղողիոս** **Պողկեր** **Հիւպատոսն**

Հռովմայ և սպարապետ նաւահանդիսին առաքեցաւ ընդդեմ Ալաբեղոնացւոց, խորհուրդ հարցին նուիրեալ հաւուց . և իրեւ նոքա ոչ ձարակելին , հրամայեաց հիւպատոսն ընկենուլ զնո՞ 'ի ծով ասելով, որովհետեւ ոչ կամեցան ուտել, թող արթեն : Այս թէպէտ ըստ պատահման յաղթեցան հռովմայեցիք , բայց չեր պարտ համարել զայն 'ի գուշակութենէ հաւուց . զի այս է առնուլ զոչ պատճառն փոխանակ պատճառի :

Վաջցուցանեն պատմութիւնք, թէ կարքեղունացիք ունեին զօրուաւոր նաւու . և թիավարու ձարտարս քան զհռովմայեցւոցն . և բայց յայսցանիէ յաւելուն՝ թէ կարքեղոնացիք ընտրեալ էին տեղի ինչ նպաստաւոր . վասն որոյ ոչ կարեին հռովմայեցիք խրամատել զկարգ թրշնամոցն , և ոչ ևս պաշարել վասն ծանրաշարժ լինելոյն նաւուց իւրեանց և անհմուտ լինելոյն թիավարաց նոցա : Դարձեալ խոռովութիւն ներքին , և հարումն խղձի զոր արհամարհութիւն կրօնիցն ազդեր 'ի զօրականս , վատասիրտս առներ զնոսա , և համարեին պատերազմիլ ընդդեմ զից զայրացելոց : Դա խկական պատճառ կորատեան զօրաց Աղօդիտաի Պուղկերի 'ի պատերազմին որ ընդդեմ Ալաբեղոնացւոց :

Պարտ է վերաբերել զգեստս առ խկական պատճառս նոցա՝ և թէ իցեն յայտնի , ապա թէ ոչ խոստովան լինել զանդիտութիւն :

Դարձեալ զնել զգաղանի օրակութիւն , զեր-

կիւղ գաստարկութեան , կամ զիարողութիւն , և այն , առ ՚ի բացատրել զբնական գործս , է առնուլ զոչ պատճառն իբրև պատճառ :

Ըարի է յոյժ խոստովանել զանդիտութիւն՝ քան թէ ջանալ ՚ի հաւանեցուցանել բառիւք , որը ոչ ինչ գաղափար առաջի զնեն մոտաց մերոց :

Ըարբառք շրթանց և այլ թիւրութիւք դիմաց և պէսալէս խեղաթիւր շարժմունք դիւթից՝ ոչ կարեն զնիլ իմաստնապէս իբրև ձշգրիտ և բնաբանական սրատճառք :

Ըարբառն ոչ այլ ինչ է՝ բայց եթէ բաղխումն օդոյ , և ոչ կարէ լինել բնաբանական պատճառ , և ոչ զայլ ինչ գործ արտադրել ըստ ինքեան՝ բայց եթէ զձայն :

Խակ որք ընծայեն նոցա զայլ իմն զօրութիւն , ենթադրեն զերկու ինչ , որք միասլէս անծանօթեն մեղ , և ՚ի նախատինս դառնան զերազոյն և կատարեալ էակին . զի որովհետեւ խոստովանին՝ եթէ զեք ոչ կարեն առնել ինչ առանց թոյլտուութեանն Վատուծոյ , դիւթական բառք ենթազրեն մասնաւոր դաշնազրութիւն ինչ ՚ի մէջ աստուծոյ և դիւին . և հարկ է՝ արդարե եթէ դաշնակից եղեալ իցէ աստուած , զի յամենայն նուազը յորս ումանք ՚ի մարդկանէ՝ այսպիսի կամ այնպիսի բանս ասասցեն , կամ այսպիսի և այնպիսի գործս գործեսցեն՝ թոյլտացէ դիւին զայսպիսի կամ զայնպիսի գործս ներգործել :

Եր պարտ է գարձեալ՝ զի մեք ունիցիմք զմաս-

նաւոր յայսնութիւն այսմ կարծեցեալ դաշնաւ-  
դրութեան 'ի մէջ Ռատուծոյ և դիւխն : Եւ ահա  
յերկաքանչիւրն իսկ ոչ գտանի , գոնէ դոյզն ինչ  
բնական պատճառ , և ոչ պատշաճողութիւն :

Անոջ ումեք եթէ յաջողեցի 'ի խաղու առ  
ընթեր՝ կալ նմա ուրուք , համարի՝ թէ 'ի նմա-  
նէ է յաջողութիւն իւր . և ահա այս է իմաս-  
տակութիւնն : Քանզի յաջողութիւնն ոչ է իրա-  
կան էակ , զի մարթ իցէ ումեք բերել զայն :

Երբեք զի սեղանակից լինին երեքտասանն  
անձինք , և արդարե բազում անգամ պատահի ,  
զի յերեքտասանից անտի սեղանակցաց՝ ոմանք  
մեռանին 'ի նմին ամի . և ոչ այնպէս զարմանք  
էին , եթէ փոխանակ երեքտասանից՝ էին երե-  
սուն սեղանակիցք : Այդ մեռանի ոմն 'ի նոցաննէ ,  
ոչ վան այնորիկ զի բազմեցաւ 'ի սեղան ընդ այ-  
նոսիկ երկոտասանն անձինս , այլ վասն զի էր մաշ-  
կանացու . և եթէ աւելի ևս լինելին ժողովեալք ,  
առաւել հաւանական էր ասել , թէ 'ի նոցաննէ  
բազումք հատուցանելին բնութեան զհարկն . որ-  
պէս և այլքն պարտին հատուցանել ըստ կարգի  
իւրեանց :

Այք զերազս հարցանեն , որք հաւատոս ընծայ-  
են ձեռահմայութեանց , և որք դուշակ լինին  
բարեբաղդութեան մանսկան , որ գտակաձեւ միզն  
զգլխով ունիցի 'ի ծնէ , անկանին յիմաստակու-  
թիւնս յայս՝ զորմէ ձառեցաք :

Ամօթն տղիտութեան , բաղձանքն առ հրաշ ,

և հակումն առ առ ելորդապաշտութիւն՝ են սպառ-  
հառք այսմ խմաստակութեան :

## ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Զ.

Անկատար թուումն :

Ե հնագուստ ծաղը առնեին զումանս 'ի փիլխո-  
փայից, որք ասեին թէ զոն հակոտնեայք . “ Ո՞լ  
իցէ այնչափ անմիտ, ասեր լ ակտանտիոս, մինչեւ  
կարծել, թէ զուցեն մարդիկ որոց ոտք վերա-  
ցեալ իցեն առաւելք զզլուխւն . . . : Փորձն եցոյց,  
թէ որք զշակոտնեայս անհնարին կարծեին՝ խո-  
բեալ գտան . և վրիպանք նոցա յառաջ եկին  
'ի թերի թուումանէ :

Վնփորձ և անծանօթ էին խսկական սպառհա-  
սին որովլնթանայ մարդ 'ի վերայ երկրի . և զի  
միշտ մղի 'ի կեղրոնն կոյս հողագնտոյս յոր մասն  
աշխարհի և իցէ, և ոչ երբեք յերկինս կոյս :

Վնկաննեին ևս յիմաստակութիւն անկատար  
թուուման, յորժամ ճանաչելով զմի կամ զբա-  
զումեղանակս, յորոց իր ինչ յառաջ զայ, կար-  
ծեին թէ զիք այլ ինչ եղանակ, որ իցէ պատճառ  
այնր գործոյ . ուր գոն ևս այլք ոմանք զորս ոչինչ  
զրեին, և սակայն այն խակ է խսկական սպառհա-  
սորա : Դու ճանաչես թէ իր ինչ լինի ըստ  
հանգամանաց ինչ, յորմէ եղբակացուցանես թէ  
ոչ է հնար այնմ լինել, բայց ըստ այնմ ևեթ  
հանգամանաց, սոյն այս է անկանիլ յիմաստա-

կութե՞ անկատար թուռման : Հառաջքան ըդարացուելն՝ պարտ է քեզքննել, եթե ճանաչես արդեօք զամենայն եղանակն որով իրացն մարթելինել, և ոչ բացորոշելյանդզնաբար, թե իր ինչ ոչ լինեի՞ եթե ոչ ըստ այնմեղանակի զոր զու ճանաչես . որպես եթե կոյր ոք ասեր, թե չիցէ հնար նիւթոյն լինելլուսափայլ . վասն զի ոչ ճանաչել ինքն բնաւ զայս յատկութիւն :

**Օ**օրագլուխ ոմն առնոյր զոռձիկ իւր ամի ամի յարքունի գանձուց՝ յեզրն փողոցին անուանեալ Աիկիլոյ արքայի . նմանապէս այլ ոմն զօրավար առնոյր ռոձիկ յարքունական գանձէ, 'ի թաղն ( )ոլէանսի, և երրորդ ոմն առնոյր ռոձիկ յարքունի գանձուց 'ի թաղն Զօրեքորդի : Վայուքիկ երեքին զօրապետք 'ի միասին գտեալք 'ի զրօսանա, առաջինն ասեր առնուլ ռոձիկ յարքունի գանձուցն որ 'ի թաղն Աիկիլոյ արքայի . այլք անդէին թե գանձն արքունական չէ 'ի թաղն Աիկիլոյ արքայի, և թե յայլում տեղւոցէ ընդունիս . և վասն այսր եղեն մեծ հակառակութեք, զրգուալք յիմաստակութե՞ անկատար թուռման, քանզի թեպէտ և յատկապէս մի գանձ է արքունական, բայց զոն երեք պետք արքունի գանձուց, որք յաջորդաբար են 'ի զործաղըութեան, և վճարեն իւրաքանչփուլքն որ ինչ նոցա անկէ է :

ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ'Է.

ԹԵՐԻ մակածութիւն :

ՎՐԱԿԱԾՈՒԹԻՒՆ կոչ ընդհանուր հետեւութիւն, զոր ձգեն ՚ի թուումանէ բազում մասնաւոր իրաց . այս խմաստակութիւն ունի կարի յոյժ վերաբերութիւն, առ անկատար թուումն՝ զորմէ խօսեցաք : Օ անազանութիւնն կայանայ յայն, զի յանկատար թուումն ոչ մտածի բաւական ամենայն եղանակն, յորոց մարթ է իմիք լինել կամ կարէ պատահել, յորմէ եղբակացուցանի թէ չէ այն, թէ պէտ և յաճախ այն խել իցէ եղանակն, որում ոչ ինչ ուշ եղեալ է :

Կ մակածութենէ սկսանին քննել զմասնաւոր իրա, յորմէ ձգեն այնուհետեւ զընդհանուր հետեւութիւն . զոր օրինակ զփորձ առեալ եթէ ջուրք ծովուն աղէհամ են, և գետոյն քաղցր առհասարակ, աստի եղբակացուցանին ընդհանրապէս, թէ ջուրք ծովուն են աղէհամ, և գետոյն քաղցրահամ: Զգտեալ և ոչ քաղաք մի ժողովրդաբնակ, յորում մարդիկ ոչ ՚ի կիր արկցեն զձայնս և զհնչմունս առ ՚ի յայտ առնել զիսորհուրդս իւլիւնց, աստի եղբակացուցանին, թէ ամենայն ժողովուրդք սովոր են խօսիլ. այս պիտի ընդհանուր հետեւութիւնք չեն ձշմարիտ, եթէ ոչ թուումն մասնաւոր իրաց՝ զոր ենթազրեն՝ իցէ Ճիշտ . զոր օրինակ եթէ ասասցի՝

գաղղիացիք, անդղիացիք, իտալացիք և գերմանացիք են սպիտակ, ապա ամենայն մարդիկ են սպիտակ. հետեւութիւնն չէ ձվարիտ, վասն պակասաւոր թուուման, որ ոչ է ձիշգ, զի մակածութին՝ ի թերի թուումանէ առեւալէ, որովհետեւ յիշովալիա սեաւ են մարդիկ:

Հառաջ քան զիտրձմն զոր արարին՝ ի մէջ անցեալ զարու զժանըութենէ օդոյն՝ կարծեին թէ անհնարին իցէ ձգել զմիտոց գլանին քաջիկ խծկելոյ առանց պայթուցանելոյ զզլանն, և թէ մարթէ հանել զջուրն՝ ի վեր որչափ և կամք իցեն, ՚ի ձեռն ջրահան զործեաց. հաստատեին զայսոսիկ հետեւութիւնս՝ ի փորձից ինչ զոր արարեալ էին, բայց ոչ ըստ բաւականին. նորոգ սպացուցաւ՝ ի փորձոյ, թէ միտոյն սրնզի ձզի զիարդ և խծկեալ իցէ, միայն թէ անդանօր վարեսցի մեծագոյն ուժգնութիւն քան զկշիռն իւրոյ զլանի օդոյն. փորձքն ապացուցին ևս, թէ ջրահան զործին ոչ կարէ բարձրացուցանել զջուրն՝ ի վեր քան զ32 կամ 33 ոտնաչափ բարձր։ Տէս զիստիրն, որ զոյ՝ ի մէջ մակածութեան, և օրինական ընդհանուր գաղափարին։

Վակածութիւնն լինի միայն զպատահական առարկայից. իսկ օրինական զաղափարն՝ որ մեզ նապաստէ իբրև տիալ՝ հայի յեռութիւնն։ Առ ՚ի կարող լինելոյ ասել թէ ջուր գետոց է քաղցր, հարկ է ունել զճաշակ ջուրց գետոց բազմաց. բայց առ ասել թէ ամենայն եռանկիւնի ունի

զերիս կողմունս՝ չէ հարկ զի տեսեալ իցեմքա-  
զում եռանկիւնիս . վասն զի առաջին եռանկիւ-  
նին զոր տեսի՞ ետ ինձ զգաղափարն եռանկեան ,  
և վասն այնորիկ եռանկիւնի կոչեմ զայն ամե-  
նայն , որ համեմատ է այսր գաղափարի , իսկ որ  
ոչ համեմատի այսմ գաղափարի՞ ոչ կոչեմ եռան-  
կիւնի :

### ԽՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Ը .

Անցանել յայնմանէ որ ըստ իմլք է ճշմարիս՝ առ այն որ  
պարզապէս է ճշմարիս :

**Պ**ԱՏՄԱԳԻՐՔ հռովմայեցւոց զրեն ինչ ինչ ա-  
ռասպելս . արդ հակառակ է բանի եղբակացուցա-  
նելանտի , թէ այն ամենայն զոր ինչ միանգամ  
զրեն նոքա՝ առասպելիցէ :

**Դ**Հմք մարդոյ ըստ մերումն համարման է  
զեղեցկագոյն՝ նկատմամք այլոց կենդանեաց .  
արդ ասի , եթէ եպիկուրեանք եղբակացուցանեին  
թէ և աստուածք ունին զդէմն մարդկայինս :

**Պ**Ետրոսն է քաջ .

**Պ**Ետրոսն է պատկերահան .

**Վ**րա **Պ**Ետրոսն է քաջ պատկերահան .

և կամասել

**Պ**Ետրոսն է քաջ պատկերահան .

**Պ**Ետրոսն է մարդ

**Վ**րա **Պ**Ետրոսն է քաջ մարդ :

Բազում յոռութիւնք զտանին յայսոսիկ իւնաստակութիւնս . Ա . Բառն ՚Քաջ առեալ է աստանօր կրկին յիմաստս . այսինքն քաջն եղեալ ըստկերահանի՝ նշանակէ ճարտար . եղեալ և ընդ մարդոյ՝ նշանակէ զօրաւոր : Բ . ՚Կարձեալ սաելով թէ Պետրոս է քաջ պատկերահան , եթէ խմացեալ լինի բառիւն քաջ , նշանակեալ զամենայն տեսակ քաջութեան , այս լինի անցումն յըստ իմիք ճշմարտէ առ պարզապէս ճշմարիսն :

### ԽՄԱՍՏԱԿՈՒԹԵԱՆ Թ.

Խարէութիւն պատահական :

Դատել զիմեքէ ըստ այնու որ պատշաճի նմա միայն ըստ պատահման :

ՎՅՍ իւնաստակութիւն լինի՝ յորժամ ձգեն զ՛ետեւութիւն ինչ բացարձակ , պարզապէս և առանց սեղմելոյ , յայնց առաջարկութեանց որք ըստ պատահման են ճշմարիտ . ըստ այսմ է , որք արհամարհէն զգիտութիւնս և զարուեստս վասն զեղծանելոյ սմանց նովաւ :

՚Արծացուցիչ զեղորայք եթէ ոչ ըստ պատշաճի մաստակարարեսցին , արտազրեն զինաստակար զործս . ապա չէ պարտ երբէք՚ի կիր առնուլ զնոսա . հետեւութիւնն չէ ճշմարիտ : ՚Ճիշկը ունիք սխալէն՚ի կիրառութիւնս զեղորէից , ապա պարտ է բացարձակապէս խոտել զգեղս , այս է ոչ առնուլ՚ի կիր :

### ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ Ժ.

Անցանել՝ ի բաժանեալ խմացուածոյ ՚ի բաղադրեալն , և ՚ի բաղադրեալ խմացուածոյ առ բաժանեալն :

Ա ՅԱՅԱՔ ԽՈԼ ԿԱՆԻԽԱԾ ՚ի տրամախօսութեան ,  
թէ պարտ է քաջըացատրել զիմաստ բառից , և  
առնուլ միշտ զնոյն բառ մի և նոյն խմացուածով  
յամենայն ընթացս տրամախօսութեան :

Ո ՌԵԲՆ ՀՅՈՎՀԱՆՆԻՍ մկրտիչ առաքելով զեր-  
կուսյաշակերտաց խւրոց առ ՀՅԻՍՈՎ ՎՐԻՍՈՎՈՒ  
Հարցանել թէ նաև ինքն իցէ որ գալոցն էր . ՀՅԻ-  
ՍՈՎ սպատափանի ետ՝ թէ Ա ՎՈՅՐ տեսանեն ,  
կաղք գնան , խուլք լսեն ., և այլն . արդ կոյրք ոչ  
երբեք տեսանեն , կաղք ոչ երբեք ընթանան որ  
պէս զայլս , և խուլք ոչ երբեք լսեն :

ՀՅԱՊԱՑԻՆ նախադասութեան՝ ՚ի ՎՐԻՍՈՎՈՒ  
ասացեալ կոյրքն խմացեալ լինին՝ որք էինն երբեմն  
կոյրք , և ասկա առողջացեալք ՚ի կուրութենէ իւ-  
րեանց՝ տեսանեն . ահա այս է՝ որ կոչի բաժա-  
նեալ խմաստ . խուլք լսեն , խմանի ևս աստանօր  
խուլք ՚ի բաժանեալ խմաստ , այսինքն՝ նոքա որ  
խուլք էին՝ ոչ ևս են խուլք :

ԽՈԼ յերկրորդ նախադասութեան , թէ կոյրք  
ոչ երբեք տեսանեն , յայտ է թէ ըստ որում կոյր  
մինչ կորուսեալ են զլոյս աշաց , որ է բաղադրեալ  
խմաստ : Վրինչ առեալ է բաղադրեալ խմացուածով  
յորժամհայի յարակցապէս ընդ ոյլում , և է ա-

ուեալ՝ ի բաժանեալ իմաստս , յորժամ մտածի զատաբար . Աստուած արդարացուցանել զամբարիշտս . ամբարիշտն առեալ է աստանօր՝ ի բաժանեալ իմաստս , այսինքն թէ Աստուած արդարացուցանել զնոսա չնորհօք , բառնալով՝ ի նոցանել զամբարիշտութիւնս իւրեանց . իսկ եթէ ասէիր , ամբարիշտք ոչ մոցեն բնաւ յարքայութիւնն երկնից . առեալ լինէր ամպարիշտն բաղադրեալ իմացուածով . այսպիսի բաղադրեալ իմացուածով ասէ առաքեալն Պօղոս , թէ . Չարախոսք ագահք , և այն , ոչ մոցեն յարքայութիւն երկնից . . . այսինքն , եթէ այսպիսիքն յարատեեսցեն մինչեւ ցմահ յայն մեղանչական սովորութիւնն : Այն մարթ անցանել առանց իմաստակութեան՝ ի միոյ այսմ իմացուածոյ յայլ՝ յընթացս մի և նոյն տրամախօսութեան :

Ո՞արթ է յառաջ բերել աստանօր զխալ զատամունս զոր երբեմն արարին զվարուց մարդկան , մտածելով զնոտ ըստ բաժանեալ իմացուածոյ . այսինքն ըստ ինչ ինչ բարի կամ չար որպիսութեանց նոցա , անփոյթ եղեալ զայլոցն : Անիբարի մեծ սպարապետ ըստ այսմ մտածութեան . զկնի պատերազմին Կաննեայ զատեցաւ՝ թէ զնայ նա նուաձել զնուովմ , այս է բաժանեալ իմաստ . բայց չափազանց վստահութիւնն և մեղկութիւն՝ խափանեցին զնա 'ի Կապուա , և այսու , ըստ բաղադրեալ իմացուածոյ , ետ Անիբար հռովմայեցւոց սպարապետ ժամանակի հալածելոյ զինքն

Ճատալիոյ : Այս հրամանատար ըստ որում հրամանատար , այս կրօնաւոր ըստ որում կրօնաւոր , այս զիտուն ըստ որում զիտուն , ոչ արասցէ այնպիսի գործ . այս է բաղադրեալ իմացուած . բայց ըստ որում ներքոյ անկեալ է կրից ինչ բուռն քան զմնածութիւնս պարտուց իւրոյ , յափշտակի յայնց կրից ընդդեմ իւրոյ ձանացման . և այս է ահա բաժանեալ իմաստ , և սոյն այս է որ ցուցանէ , թէ չէ պարտ դատել զմարդիկ , ոչ ըստ արտաքին որպիսութեան և ոչ իսկ ըստ այնմ՝ որ է օգտակար նոցա . այլ պարտ է դատել ըստ խառնուածոյ , ըստ բնութեան և ըստ յանկմանց նոյն . միուլ բառիւ , 'ի բաղադրեալ իմաստ :

Ի բաղադրեալ իմացուած՝ բառ ինչ պահէ զիւր նշանակութիւն ըստ ամենայն հայեցուածոյ . և այս նշանակութիւն մտանէ 'ի շարադրութիւն ամենայն պարբերութեանց . իսկ 'ի բաժանեալ իմաստո ըստ իմիք իմացուածոյ և թէ և սեղմելով , զի բառ ինչ պահէ զառաջին նշանակութիւն իւր . “ Կոյրք տեսանեն „ . այսինքն այնոքիկ որք կոյրք էին :

ԻՄԱՍՏԱԿԱՌԵԹԻՒՆ ԺԱՆ

Անցանել 'ի հաւաքական խմացուածոյ՝ 'ի տրամաբաշխական խմաստ, և 'ի տրամաբաշխական խմացուածոյ՝ 'ի հաւաքական :

**Օ որ օրինակ .**  
**Ո արդն մտածէ .**  
**Ա բդ՝ մարդն է բաղկացեալ՝ ի մարմնոյ և 'ի հոգւոյ .**  
**Ա պա մարմինն և հոգին մտածեն :**

**Ո արդն մտածէ տրամաբաշխական խմացուածով, այսինքն ընդ միում յիւրոց մասանց, և յայն սակս մարթ է ասել ընդհանրապէս, թէ մարդն մտածէ, բայց ոչ հաւաքապէս ընդ ամենայն մասանց իւրոց :**

**Ա յսպէս եղծանի այս տղայական խմաստակութիւն .**

**Ա բդ՝ սուրբն Պիետրոս էր առաքեալ .**  
**Ա պա սուրբն Պիետրոս էր երկոտասան :**  
**Ա ռաքեալքն էին երկոտասան հաւաքապէս, այսինքն առեալ ամենայնն միանգամայն, և ոչ տրամաբաշխապէս, այսինքն առեալ իւրաքանչիւրն զատաբար .** “**Ա պա սուրբն Պիետրոս էր երկոտասան . . . , այսինքն թէ նա էր տրամաբաշխապէս մինն յերկոտասանից, և ոչ բոլոր երկոտասանիքն ՚ի միասին հաւաքապէս :**

ԴՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ ԺԲ.

Ե բնականէն առ գերբնականն , և 'ի բնականէն առ  
արհեստականն :

**Վնցանելսեռէ 'ի սեռ :**

Ա . Հյորժամշինի անցումն 'ի համարնականն կար-  
գէ՝ առ բնաբանական կարդ : Վպաքէն իմանամ  
'ի խօսել իմում զլեռնէ , զքաղաքէ , զստորասու-  
թենէ , զքացասութենէ , զկենաց և զմահուա-  
նէ , և այն , ասեմ յայնժամ , թէ ունիմ զգաղա-  
փար լերին , զքաղաքի , և այն . բայց բայն ու-  
նել , առեալէ աստ զեղծմամբ յայլաբանական  
իմաստս . զի չունիմք գաղափար ինչ նովին եղա-  
նակաւ ողկ ունիմք իրական առարկայիցս . ուս-  
տի նոքա ողք նկատեն զգաղափարս իբրև զիրա-  
կան էակս , անցանեն 'ի համարնաբանական կար-  
գէ՝ առ բնաբանական կարդ :

Օնոյն է իմանալ և զնիւթոյ . զանազան մար-  
մինք մասնաւորք և իրականք որ շուրջ ունին  
զմեօք , զգածեցուցանեն զմեզ տպաւորելով 'ի  
զգայարանս մեր . յետ այնորիկ վերացուցեալ  
յամենայն մասնաւոր տպաւորմանց , այսինքն ոչ  
հայելով 'ի գոյնն , ոչ 'ի պնդութիւնն , ոչ 'ի կա-  
կղութիւնն և ոչ յայլինչ զգալի յատկութիւնս  
մասնաւոր մարմնոց , մեք մեզէն կազմեմք նմա-  
նութեամբ հանդերձ հիմամբ յորսյ վերայ դնի  
իր ինչ իբրև 'ի վերայ խարսխի , զաղափար ընդ-

Հանուլը ինչ ենթակայի այսոցիկ ամենայն յատ-  
կութեանց, և զայս երևակայեալ ենթակայ կո-  
չեմք՝ Ախւթ կամ առաջին նիւթ, զոր ըսբոննեմք  
իբրև խարիսխ այսց յատկութեանց, որ չէ  
այլ ինչ, եթէ ոչ բառ վերացական, որպիսի է  
Երկայնութիւն, սալիտակութիւն, գոյն և այլն.  
քանզի չիք բնաւ իրական էակ, որ չիցէ նիւթ  
թօթափեալ յայլ ամենայն յատկութենէ:

Սիք յարարածս եթէ ոչ էակք մասնաւորք:  
Ախւթն ընդհանուլը կամ առաջին նիւթն չէ  
այլ ինչ, թէ ոչ եզր վերացեալ, և սոսկ ար-  
տաղրութիւն ինչ մոտաց մերոց. ուստի փոխանակ  
չափաւորելց զմեզ առ ՚ի ոչ մոտածել զնիւթն  
որպէս պատկերակերպեալ ենթակայ յատկու-  
թեանց մարմնոց, նկատեմք զնա որպէս նշան ինչ  
զգածման մոտաց մերոց, և միով բանիւ վերա-  
ցուցման ինչ, և ոչ որպէս տպաւորումն իրական  
ինչ առարկայի. վասն զի լինի անցումն ՚ի հա-  
մարնաբանական կամ ՚ի գաղափարական կար-  
գէ՝ առ բնաբանական կարգ, նկատել զնիւթն  
որպէս իրական էակ ընդունակ ամենայնակերպ  
տեսակաց, և կարծել թէ մասնաւոր մարմինք  
չիցեն այն որ ինչ ենն, եթէ ոչ բառ դասաւորու-  
թեան, կամ բառ տրամադրութեան մասանց այն  
կարծեցեալ առաջին նիւթոյ. որ ոչ զոլով բառ  
ինքեան իրական ինչ, ոչ կարէ ունել մասունս:  
Վհա այս սուտ եղանակ տրամաբանելց ետ պատ-  
կերակերպել ոմանց մոլեզին նախանձայուզաց,

որ միշտ՝ ի պատրանս մտահաճութեան իւրեանց ըմբռնեալ կան, [թէ զոյացութիւն ուկւյն կայանց միայն՝ ի դասաւորութեան մասանց ինչնիւթոյն. ուստի արհեստիւ կարող են տալ զայս դասաւորութիւն այլոց ևս մետաղաց, որով մարթին ուկիանալ։ Այս մամնաւոր մարմինք՝ ի բնաբանական կարգի անդստին ըստ ինքեան, և յատուկ զոյացութեամբ իւրեանց են այնպիսի, որ ինչ ենն, և ոչ կարեն ընդունիլ զայլայլութիւն մինչեւ ցահման ինչ, և ըստ միակերպ և անայլայլակ արտադրութեան բնութեանն՝ և որոց մեքենական կազմութիւնն զանխուլէ՝ ի մէնջ՝ առ թերահմտութե մերոց՝ ի զործարանս մերոց զգայարանաց։ Անմարթ է երբեք ունել զցորեան՝ բայց՝ ի սերմաննէ ցորենոյ, և ոչ կենդանի կենսաւոր՝ [թէ ոչ ըստ սահմանադրութեան բնութեանն յաղագս արտադրութեան կենդանեաց. անմարթ է երբեք ունել հաստատուն մնունդ պարզապէս հեղուկ նիւթով, և ստամիքս մեր ոչ երբեք յօրիննէ բարեգոյն մամաց ձկնեղինով. ուստի որ ինչ ասի զՄԵՐԴԻՀՐԴԱՏԱՅ, բնաւ առասպելք են։ ՄԵԾՆՊԵՏՐՈՍ, կամեցեալ սովորեցուցանել զմանկունս նաւաստեաց իւրոց ծովային ևեթ շատանալ ջրով, մեռան ամենեքին. ուստի ոչ նկատեմք զբառն նիւթ, եթէ ոչ իբրև եզր ինչ վերացուցեալ, և իբրև ենթակայ պատկերակերպեալ ըզգալի որակութեց, ապա պարտ է ոչ բառնալ, և ոչ յաւելու ինչ յայն զոր ինչ իմանամք այսու զա-

ղափարաւ : Ուսումնականք նկատեն զգիծն վերացուցմամբ իբրև սոսկ երկայնութիւն . արդ լինի անցանել՝ ի համարնաբանական կարգէ , ի բնաբանական կարգ , և մտածել այնուհետեւ զընաբանական զիծնը ըստ երկայնութեան եւեթ , և ասել , թէ զիծ ինչ ձգեալ՝ ի վերայ մարմնոց՝ ունի միայն երկայնութիւն առանց իւիք լայնութեան :

Բ . Աւս և լինի անցումն սեռէ՝ ի սեռ , յորժամ բացատրին խորհուրդը կրօնի՝ որք են՝ ի գերենական կարգի , տրամախոհութեան ինչ՝ որ հիմնեալէ՝ ի վերայ բնաբանական կարգի : Կախնիք ումանք անկան յայս իմաստակութիւն ցուցանել կամեցեալ զխորհուրդն յարութեան փիւնիկ հաւուն , որով անկան իսկ՝ ի պատրանս իմաստակութեան սուտ ենթադրութեան . քանզի ոչ երբէք եղեւ յառնել փիւնիկ հաւուն յիւրոցն յատուկ մօխրոց . ուստի յորժամինզիր լինի զխորհուրդոց հաւատոյ , պարտ է՝ ի բաց զնել զալատառուս , ապաստաննելով՝ ի սոսկ յայտնութիւն , այս ինքն յիրա՝ զօր Աստուծոյ յայտնեալէ մարդկան գերենական եղանակաւ , քան վաստակաբեկ առնել զմիտա՝ առ՝ ի պատկերակերպել զբութիւն համաձայնութեն հաւատոյ ընդ բանի . եթէ ինզիրըն զօրմէ է բանն է յայտնեալ , բոլորովին ասացեալ է , և յայն հաւատալ հարկ է , ընդ որ զարմանալ հարկ է . Ովկիորք . . . անհաս բանի , ի վերքան զբաղգատութիւն , և քան զնմանութիւն , առաւել զստեղծումն վերացեալ եղէ .

բայց հնարելոց 'ի ըստանել զդժուարութիւն ողք  
 պարտին տեղի տալ աստուածային իշխանութենու  
 Ա,թէ այն խնդիր է զորմէ բանն չիցէ յայտնեալ  
 և կամ չէ անհրաժեշտ հետեանք ինչ 'ի միոյ յայ-  
 տնեալ ձշմարտութենէ , բանն՝ որոյ աստուած է  
 հեղինակն՝ առնու 'ի ձեռս զիշխանութիւն իւր .  
 յայնժամ հարկ է վարել սոսկ զբնական լցոն ,  
 ուղղեալ 'ի փորձոյ և 'ի յանդրադարձութենէ ,  
 այսինքն 'ի դիտողական մտաց և 'ի ձշգրտութէ  
 առանց դիմելոյ առ տրամաբանութիւնս՝ ողք  
 թուին մեզ համեմատ ընդ խորհուրդս + ուստի  
 ողք կամին անբասիր առնել կամ պաշտպանել  
 զմուացածին հրաշ զիցապաշտից , վասն նմանու-  
 թեամն զոր անդ գտանեն ընդ իրական և յայ-  
 տնեալ հրաշ սուրբ զրոց , թուի ինձ թէ անկա-  
 նին յիմաստակութի՞ զորմէ են այժմ բանք մեր :  
 Հոմերոս 'ի վերջն իննետամներորդ զրոց Աղիա-  
 կանին՝ տայ խօսել ձիոյն Աքիլլեայ . Տասիէ ոչ  
 շատանայ անբասիր առնել զնա այլ և զարմանայ  
 ընդ այն . “ Օ ի էր այն , ասէ , ընկալեալ աւան-  
 դութիւն 'ի մէջ Յունաց , թէ խոյն Փոփքսեայ  
 խօսեալ էր : Ի հին պատմութիւնս , յորս բա-  
 զում նմանօրինակ հրաշք աւանդին , զոր օրի-  
 նակ թէ եզն խօսեցաւ , թուին վկայել Հոմերի .  
 և զարձեալ ոչ անկարելի ինչ եղե խօսել պան-  
 չելեօք իշոյն Բաղասամու . . . Աւ 'ի գիրան Ապա-  
 կանութեան ախորժակաց . ” Համարձակիմա-  
 սել , ասէ նոյն ինքն Տասիէ , թէ ոչ այլուրեկ 'ի

զիրս Հոմերի պայծառազոյն փայլէ մեծ հարտարութիւն բանաստեղծին . և յաւելու , թէ հայրն Պօստիւ բարւոք առէ , թէ զրուազս այս համարելի է ընդ հրաշմ՝ որովք Աղիականն զիրք լի են . որպէս ընթերցեալ լինի 'ի հռովմայ եցւոց պատմութե՛ 'ի ժամանակս 'ի ժամանակս պատահեալ . և որպէս զիտեմք իսկ զիշոյն Իազաամու զիսօսելն . ապա Հոմերոս եթէ յաձախ ևս 'ի կիր առնոյր զայս ազգ համարձակութե՛ , չեր մարթանգումնել զվեալս նոր իբր անտեզիս . : Աւ 'ի վլր ածէ . "Իհա այսալէս իմաստասիրեն զիսնականք . . . : Ինձ թուի ըլհակառակն , թերութի հրմտութե՛ և ճշգրտութե՛ տրամաբանութե՛ , և ոչ զսպատշաճ խորհուրդս բերել զիսկութենէ մարդկային մատաց . և զիստրութենէ՝ զոր զնել պարտէ ընդ բնական և ընդ գերբնական կարգ , 'ի կիր առնուլ զօրինակն բաղաամեան իշոյն առ արդարացուցանելոյ զմանկական կեղծիսն Հոմերի . կամ առ հաւատարմացուցանելոյ որ ինչ արտաքին պատմութիւնն պատմէ զկենդաննեաց խօսելոյ . զի է խառնավար առնել զսուրբ զիրս , ածելն զայն 'ի վկայութիւն յնորից բանաստեղծիցն , կամ արտաքնոյն պատմութեանց , և ուսմէ կական շնչանաց յածելոց 'ի ժամանակս պատմագրաց :

Իգամեմնոն զոհեաց զդուստր իւր զ Ափիզինէ . և երեւակայութիւն մեր զուարձանայ յարդ իսկ նկարագրութեամբ 'ի թատեր այսր պատմու-

թե, կամ այսր առասպելի, որ յոյժ նախատինս  
ածէ խորհեց մարդկանց ժամանակին այնորին.  
բայց սակայն ոչ օրինաւոր առնեն զայն՝ ոչ օրի-  
նակն չէրթայեայ, ոչ լքրահամուն. միովը բա-  
նիւ, պինդ կացուք զպատշաճ կարգն, 'ի կըթել  
զախորժակս մեր 'ի վաստակս հանձարոյ, թէ  
յուղղութիւն վարուց մերոց և թէ 'ի հաւասու  
ընծայել կամ 'ի չաւաստալ որ ինչ հրաշք պատ-  
մին միանգամ'ի վեպս :

Հաճեցաւ լուսուած երթեմն յայտնել զկամն  
իւր երազովք. միթէ օրէն իցէ մեզ 'ի կիր առնուլ  
զայսոսիկ մասնաւոր օրինակս առ 'ի հաւաստի  
ընծայեցուցանելզերազն Հեկուբայ և զայլքա-  
զումերազս, զորոց բանք են 'ի պատմութիւնս  
և յառասպելս. և միթէ իրաւամբք չիցէ այժմ  
արգելեալ յեկեղեցւոյ, ոչ ընծայել հաւաստ ե-  
րազոց և ամենայն յայտնութեանց, որք ոչ են  
հաստատեալ 'ի նմաննէ. եկեղեցին է միայն սիւն  
Ճմարտութեան, կանոն, միջնորդ և Ժարգման  
աստուածային յայտնութեան :

Կարգն ընական է միակերպ, ուստի ունիմք  
իրաւունս տրամաբանելոյ համեմատութեամբ, և  
պարզ նմանութեամբ 'ի ընական իրս. այն՝ որ  
միանգամ է Ճմարիտ 'ի կարգի բնութեան, և  
միշտ Ճմարիտ, յորժամ պարագայք են Ճը-  
ղիւ նոյն. ուստի ուր ուրեք տեսանեմք զնոյն ե-  
րեոյթս, պարտիմք դատել նուվին պատճառօք. և  
չիք մեզ հարկ ընաւ զօրէն սրբոյն Յովսեփայ

ողջախոհ փեսային Արքիամու , ունել աստուածային իմն յայտնութիւն առ 'ի զարտուղիլ 'ի հասարակաց կարգէ : Ծայց եղանակն որով Աստուած ներդրձէ 'ի գերբնական կարգի , չէ հիմնեալ 'ի նման միակերպութեան . ըստ հակառակն գործն գերբնական արտադրի միայն մասնաւոր իմն կամօքն Աստուածոյ , կամմասնաւոր իմն թոյլտութեամբ . ուստի ոչ պարտիմք բնաւ տրամաբանել համեմատութեամք 'ի գործս գերբնական կարգի . և հարկէ մեզ պինդ ունել զայն՝ որ յայտնեալէ :

Առողք զիրն ուսուցանէ մեզ , [թէ] Կարուքողնոտար աստուածասատ պատուհասիւ փոխեցաւ 'ի կերպարանս արջառոյ . արդէ անցումն սեռէ 'ի սեռ՝ սովորն օրինակաւ հաստատել զայլակերպութիւնն Ավելի եայ : Առ եթէ խելացնորք ոմանք զանձինս կարծեցին փոխիլ յեզն կամ 'ի զայլ , բժիշկք և փիլտրոփայք յիրաւի համարին զնոսա մելամաղձոտս , և նկատեն զայսպիսի զիպուածս իրք գործ զօրութեան և խանգարման երեւակայութէ : Ավրաստիոս 'ի վիպելանդ զմի 'ի ճանապարհորդութեանց իւրոց , ասէ , [թէ] յորժամ եհաս 'ի Անիդոս , բնակիչք քաղաքին ետուն նմա պատճառս ծիծաղելց և զուարճախօսելց . զի Կամեցան հաւանեցուցանել ըզմեզ , ասէ , [թէ] խունկն զոր գնեն 'ի վերայ սեմոց տաճարի իւրեանց՝ բորբոքի ինքնին առանց հրոց . : Յոր Տասիէ խմաստասիրէ , [թէ] այս

սքանչելլիք ունին ոչ սակաւ նմանութիւն ընդ հը-  
 րոյն Եղիայի , որ իջոց հուը յերկնից 'ի վերայ  
 զոհին . այս խոկ է անցումն կարգէ 'ի կարգ :  
 Համառօտ ասել , ամենայն դատմունք մեր պար-  
 աին ունել , զյատուկ և զօրինաւոր շարժառիթ ,  
 յորոյ վերայ հաւանութեան մտաց մերոց հիմ  
 նել պարտ է : Կերքնական զործք նշանակեալք  
 'ի սուրբ զիրս , ծանուցեալ են մեզ վկայութեամբ  
 իւիք , որ ունի իրաւունս պահանջելոց զհաւանու-  
 թիւն մեր . խոկ որ ինչ պատմեն մարդիկ հակա-  
 ռակ անյեղի կանոնի բնութեան , է միայն ար-  
 տազրութիւն տգիտութեան նոցա կամ նոցին  
 ախորժակաց հրաշխցն կամ խօթամութեան  
 նոցա բերմունք , կամ խանգարման զաղափա-  
 րաց և կամ հեշտութեան , զոր ձախողակի  
 միտք նոցա գտանեն առ 'ի հարկել զայլ , կամ  
 հուսկ յետոյ խորամանկութեան նոցա՝ որում  
 բազում անգամ կից է շարաշահութիւն նոցա :  
 Ուստի յամենայն նուազս արտաքոյ կարգի զործք  
 որ ոչ հաստատեալ են որոշակի յարարչէն և 'ի  
 տեառնէ արարածոց , բանն արդարակորով պա-  
 հանջել կարծել թէ նոքա որք զայսպիսիս պատ-  
 մեն խարեն , կամ խարեալ խոկ են , քան թէ  
 հաւատս ընծայել վկայութեամբ և թ նոցա՝ զո-  
 րոց քաջ ձանաշեմք զտկարութիւնն , թէ բնու-  
 թիւնն մոլորիցի , կամ ոչ լուսուած արարիչ նո-  
 րա , զոր անփոփոխն դաւանեմք , ներքոյ անկցի  
 հաճոյից կամաց մերոց :

Վակայն ոչ ինչ այնպէս դժուարին է մնաց ,  
որպէս խոստովանել զիւքն անգիտութիւն , և  
պարզմնութեամբ կալ և մնալ յայնմ խոստովա-  
նութեան : « Կարձեալ և միտք մեր հեղդ էն , և  
ոչ սիրել յուզախնդրութիւն , բայց կամի դատել .  
և յորժամ ոչ տեսանէ նախկին տեսութեամբ  
զպատճառս զարմնալեաց գործոց , այլ պատճառս  
հայթայթէ . և իբրև պատճառ ինչ ընական ոչ  
ընդ առաջ լինինմա , դիմէ առ գերենական պատ-  
ճառս . ըստ այսմ ձեռնածուք , առասանախաղք ,  
հրակուլք , և որք հանեն 'ի բերանոյ իւրեանց  
ժապաւեն , դարձեալ և լարախելք համարին  
կախարդք 'ի ռամկաց բազմաց , որք միշտ հրաշից  
են փափաքողք , անընդունակ քննութեան , և  
բազմապատիկ անզրազարձման մնաց , և որք  
դատեն զնոցանէ գործելը ըստ հասարակաց մարդ-  
կան՝ յորոց շրջապատինն : Հովիւք զիւզօրէից ,  
որք 'ի ձեռն ընական պատճառաց զարմացուցա-  
նեն զմերձակայս , կամ առնուն վրէժս 'ի թշնա-  
մեաց իւրեանց , համարին և նորա հմուտք գաղ-  
տնեաց կախարդութեան : Կատաղիք և լուս-  
նոտք՝ որոց վասն արդի իմաստունք կառուցին  
օգտակար հիւանդանոցս , որք բառնան 'ի ժողո-  
վը զըրդոց զառիթս աւելրդապաշտութեան , հա-  
մարէին բազում անգամ ոնդ զիւահարք : Ի՞այց  
ահաւասիկ խելամութիւնք ինչ՝ որք կարօղ էն  
օգնել իբրև յառաջարդել զգուշութիք ընդդեմ  
այսց մոլորութեանց .

Ա . Տղիտութիւն բնաբանութեան , կից ունելով զախորժակս հրաշխ , և զհակումն կամելը միշտ բացորոշել և գտանել պատճառս ինչ . քան թէ քննել , կամ կալյերկբայս , տեղի ետ դիմելոյ 'ի գերբնական պատճառս : Վայս այսպէս պատահէր առ կռապարիշտս , և ցարդ ևս պատահէ 'ի Հիւսիս , և 'ի Հնդկաստան , և յամենայն ազգս՝ որք անգետ են բնաբանութեան :

Տղիտութիւն 'ի բնաբանականն եղեւ երեւմն պատճառ , զի արք իմաստունք դատապարտս արարին զայնոսիկ , որք տեսեալ թէ արեգակն ծագէ յառաւօտուն 'ի միոյ կողմանէ , և մտանէ յերեկոյին 'ի միւս կողմն , կարծեցին թէ մուտք արեւու առ մեզէ ծագումն առ այլ ժողովուրդս : Այդին փիլիտփայք դատապարտեցան ևս և արտաքսեցան 'ի ժողովոյ հաւատացելոց . սակայն փորձն արդարացոյց զգուշակութիւն նոցա , և եցոյց թէ քանի իմաստութեամբ և զգուշութեամբ հարկէ վարիլյայսպիսի դիպուածս՝ մինչև հրատարակեալ զայնպիսի դատապարտութիւն : Վարթէր ինձ յառաջ բերել և այլ բազում օրինակս , բայց բաւական համարիմ ազդ առնել , թէ որչափ առաւելքազմնհմուտ ոք իցէ բնաբանութեան և պատմութեան բարուց և կարծեաց մարդկան , այնչափ սակաւ անկանի 'ի պատրանս ռամկական մոլորութեանց :

Բ . Վմենայն աստուածաբանք և փիլիտփայք ուստիցաննեն մեզ , թէ սուկ բնական լոյսն ոչ ինչ

ծանուցանել մեզ զհրեշտակաց և զգիւաց, ըստ  
առածին, թէ ։ Օ Հրեշտակաց և զգիւաց բանն  
ոչ ինչ, հաւատքն խուն ինչ, իսկ երեակայութեա-  
բազում ինչ յոյժ, ։ Ուստի յորժամունքն գեր-  
բանական շարժառիթ ձգէ զմեզ՝ ի հասարակ կար-  
գէ յորում բանն ևեթ առաջնորդէ մեզ, ոչ  
երբէք պարտ է զիմել առ պատճառ ինչ զօր  
բանն ոչ ձանացէ, զի այս լինի անկանել՝ ի նահա-  
րահաւատ ցնորա՝ յորում դատմունք չյենունյօ-  
րինաւոր շարժառիթս :

Դարձեալ կրօնն ուսուցանել մեզ, թէ դեքն  
ոչ ինչ կարող են առնել առանց մասնաւոր թոյլ-  
տուութեանն Աստուծոյ, ուստի ոյք հաւատան  
թէ գուցեն մարդիկ որք կարող իցեն գործել  
գերբնական գործս դաշնակից լեալ ընդ դես,  
հարկ է զի ընդունիցին և գերկուս ենթազրու-  
թիւնս, որոց ոչ ինչ ասպացոյց մարթ է ունել.  
Ա. Դաշնակցութիւն ինչ՝ ի մէջ Աստուծոյ և  
զիւին՝ ենթազրէ թէ յամենայննուազայորժամ-  
կամիցի կախարդ ոք առնել գործս ինչ, հարկ է  
զի Աստուած թոյլ տայցէ զիւին արտազրելըստ  
հաճոյից կախարդին։ Բ. Պարտ էր կախարդին  
ունել յայտնութիւն ինչ այսր դաշնակցութեան,  
առ ՚ի զիտել և զբառմն իսկ զոր արտաքրերելոցն  
էր, և զծամածութիւնն զօր առնելոցն էր. արդ  
զոր ասպացոյց ունիմք մեք վասն այսպիսի ամբաւ-  
րիւտ գործոյ գերազոյն էակի, որոյ իմաստու-  
թեն երկրազեմք. և որովհետեւ ոչ ինչ յայ-

տնութիւն ունիմք այսպիսի դաշնակցական գործոյ , զի՞արդ մարթ է զիտել թէ որպիսի բանք և որպիսի գործողութիւնք առաւել սեփհական իցեն քան զայլս , առ ՚ի արտադրել զպահանջեալ գործս :

Վարսմինք հային առ միմեանս մասնաւոր իմն և անայլայլելի կարգաւ . որք ոչ ՚ի ներքոյ անկանին կամաց ստեղծական հոգւոյ , որք ըստ բնութեան իւրեանց ոչ ինչ յարաբերութիւն ունին ընդ մարմինս . ՚ի բնաբանութեան անդ , ոչ լինէր առաւել ստոյգ ինչ , եթէ հոգեորեակք կարող լինէին փոփոխել զշարժմունս : Ուստի ամենայն գերբնական կարծեցեալ գործք , թէ ունին զշիմն ինչ , ոչ սպառտին ընծայիլ եթէ ոչ բնական պատճառաց , և ենթադրեալ թէ իցեն՝ են սոսկ ընդունայն արտադրութիւնք խարեւութեան և նանրահաւատ ցնորից :

Գ. Գործք ինչ որպիսի են մագնիսական քարին , ելեքտրականութեան , արտադրութեան տնկոց , ծննդեան կենդանեաց և մննդեան նոցաւայն , որչափ և հրաշալիք իցեն , ոչ շարժեն զմեզյայն զարմացումն , որ առնէ դիմել՝ ՚ի պատճառս գերբնականս . և էր աղագաւ . թերևս զի գտանմեմք զայսպիսի գործս ՚ի բնութեան . այս միայն պարտ էր բաւական լինել . սակայն չէ բաւական , քանզի սովքա զօր ամենայն պատահեն , և սովորականք են մեզ : Վարդ դէպք անսովորք որք զարմացուցանեն զմեզ , սականք իցեն ՚ի

բնութեան՝ այնու զի հազիւ պատահեն և զի վնացին պատճառումն անգիտանալք . և իցի՞ այս բաւական առիթ զիմելց առ զերբնական պատճառ : Վիստառը աստղ ոչ երեխ յաճախ որպիշո զլուսին կամ զարեգակն , և միթէ վասն այսու բիկ ցիցի՞ ի ընական կարգի . թնդիւն ինչ յան կարծակի զարթուցանէ զմեզ՞ ի զիշերի , ուրեմն իցի՞ սա դե ինչ օդային , կամ ուրուական ինչ մեռելց , որ պատճառեաց զայն . ցիցի՞ այդ անցումն ՚ի ընական կարգէ՞ ի զերբնական կարգ . և ցիցի՞ արդեօք բանաւոր ևս ընծայել զայն թնդիւն ընական պատճառի խմբք, թէպէտ և անծանօթի :

Դ. Եղեն յամենայն ժամանակի խարեւայք և նանրահաւատ պարզամիալք , որք պատճառս առեալ զտղիտութիւն և զտկարամութի՞ ուամ կաց , հաստատեցին զաղանդա , որք իբրև զիս խաղրական ցաւս կամթէ հաճոյ ումեք թուեցի ասել՝ իբրև զգիստառը , տեւցին յերկար կամ սուղ ժամանակս : Իբր հազար ամառ յառաջքան զթուական մեր , աղանդն Ախօի հաստատեցաւ յարեւեաննն Խսիա , ուր կայ տակաւին մինչեւ ցայս օր : Օ ածս զայս քարոզեն Պինցք ՚ի Չին յանուննի , առէ հեղինակն պատմութե՛ մարգիային ոգւոյ , քարոզեն անմահական կեանսինչ . և թէ հազարաւոր Պինցքնուիրեն զկեանս իւրեանց ՚ի կըրթութի՞ ապաշխարութե՛ յորմէ սոսկայ բնութին . ոմանք անցուցանեն զկեանս իւրեանց մերկ և շըղթայակապ , այլք կըեն անուր երկաթի , որ

կորացուցանել զնոսա , և ունի զՃակաս նոցա  
միշտ խոնարհեալ յերկիր . մարթ է ասել զնո-  
ցանել , զոր ասէր երբեմն Տերտուղիանոս , թէ  
“ Ա տանը անքն առնեն զնա մարտիրոս , այլ պատ-  
ճառն ” : Պոնցք մոլորեցան նանրահաւատու-  
թեամբ իւրեանց , և նանրահաւատութիւն նո-  
ցա մոլորեցուցանել զժողովուրդս զայսոսիկ , վասն  
զի են ինչ՝ ի նմա զարմանալի և հիանալի իրք :  
Եթէ Պոնցք վարէին զհասարակ ինչ վարս ,  
և թէ տային դասս և զօրինակս փափկու-  
թեան և ցանկութեան , ժողովուրդն չունէր  
ինչ գտանել զարմանալի ինչ՝ ի քարոզութեանն ,  
և ոչ՝ ի վարս նոցա . իսկ զի անսովոր կեանս վա-  
րեն՝ ռամիկն որ վասն ամենայն անսովոր իրաց  
կրթի՝ ի զարմացումն , անցանել նկատմամբ նոցա  
՝ ի բնական կարգէ առ գերբնական կարգ ինչ , որով  
երեակայութիւն իւր ըմբռնեալ՝ ի զարմանս՝ գտա-  
նի հաւան :

“ Կրյնալէս ևս է անցանել կարգէ՝ ի կարգ յոր-  
ժամառեալ լինի՝ ի յատուկ իմաստս այն՝ որ ա-  
սացեալն է յայլաբանական իմաստս : Յորժամ-  
ասաց Ռիստոս թէ ” Աւր գանձն ձեր է , անդ  
և սիրտ ձեր եղիցի „ . բառիւս սիրտ չէ պարտ  
իմանալ զմասն մերս մարմնոյ՝ որ համարի գըլ-  
խաւոր մասն մարմնոյ , այլ իմացեալ լինին իղձք  
հոգւոյ . որպէս և այլուր ” Տուր զիրաքոյ Շո-  
տուծոյ „ , այսինքն սիրեսջիր զտէր Աստուած քո :  
Պոն և այլ բազում եղանակք խօսից այլաբան-

օրէն ասացեալք որպէս յորժամ ասի ։ Տալ  
զսիրտ իւր + ստանալ զսիրտ իւր . . , և այն :

**Վակայն երեելի քարոզիչ ոմն ՚ի վեցերորդ**  
դարուն ասէր , թէ ՚ի մեռանել մեծատան ու-  
րումն որ էր ագահ յոյժ , յորժամքային զմարմին  
նորա առ ՚ի զմուսել ոչ զտին զսիրտ նորա ՚ի փո-  
րի իւրում . և այս զիսպուած զարմացոյց յոյժ զվե-  
րաբոյժս : Այս այր ոմն խոհական և իմաստուն  
որ անդ զտաւ , հաւանեցոյց զմերձաւորա նորա և  
զվերաբոյժս , զնալ և յուզել ՚ի փակեալ արկեղ  
նորա , զուցէ անդ իցէ սիրտ նորա ըստ բանի Տեա-  
ռըն՝ որպէս և էր իսկ , ասէ մատենազիրն . զի  
զնային ՚ի փակեալ արկղն , և բացեալ զտին անդ  
խակապէս զսիրտ ագահին :

**Վայպիսի առակք բարեմտութեամբ ասա-  
ցեալ , առաւել հրահանգիչք են քան զառակսն Եւ-**  
**սովարյ . քանզի ուսուցանեն մեզ ձանաչել զողի  
մարդկային :**

### ԽՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ ԺԳ .

Անցումն յանդիտութենէ ՚ի գիտութիւն :

**Վանոն անշուշտ այս է՝ զի լիցի անցումն ՚ի ծա-  
նուցելոյ առ անծանօթինչ . բայց ներհակ այսմ  
զտանին ոմննկ՝ ողք զուն զործեն անցուցանել  
զմեզ յորոց ոչ զիտեն՝ առ այն զոր կարծեն զիտել :**

## ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ ԺԴ.

Ի կարողութենէ առ ներդործութիւն :

Ի կարողութենէ առ ներդործութիւն ոչ ինչ արժէ հետեւութիւն . յոռի շըլանակ :

**Ա**յս այլով անուամք կոչի Փոխադարձութիւն . և լինի՝ յորժամք առ ապացուցանել զինզիր ինչ 'ի մէջ առնումք զայլ ինչ՝ օրոյ ցուցումն կախի 'ի նոյն իննզրոյն , որ էր ապացուցանելի . բայց պարտ էր եզրակացութեանն պարունակիր 'ի նախադասութիւնս յորոց յառաջազայի :

## ՅՕԴԱԵՐԾՈՒԹԻՒՆ ԺԴ.

Զանազան եղանակ տրամաբանութեան :

**Ա**յսաթար վերագոյնդ , թէ հաւաքարանութիւնն բաղկանայ յերից նախադասութեանց , որք են մեծագոյն , փոքրագոյն , եզրակացութիւն կամ հետեւութիւն :

Ե հոետորական ճառս և յընտանի զրոյցս՝ ոչ յայտնապէս 'ի վար արկանի հաւաքարանութիւն . վասն զի լինի այն եղանակ ինչ խօսելց խիստ և ցամաք . բայց հաւաքարանութիւնն յամենայն տրամաբանութիւնս միշտ զտանի՝ յայտնի կամ զաղանի : Հոետորք զիւրաքանչիւր

նախադասութիւնս մասնաւորապէս առեալ՝ տարածեն և ընդլայնեն նախ քան զեզրակացութիւն . զոր օրինակ եթէ տրամադրանն ասասցէ . Ամենայն հպատակք պարտական են պատուել զթագաւորն .

Իսկ արդ այս ոք է թագաւոր .

Վպա ամենայն հպատակք պարտական են պատուել զնա :

Հռետորն զիւրաքանչիւր նախադասութիւնս սորա ընդլայնէ , ցուցանելով՝ թէ օրէնք բնական , աստուածային և մարդկային , և թէ աստուածապաշտութիւնն և կրօնք պարտաւորեն զհպատակս պատուել զթագաւորիւրեանց : Եթէ այսորիկ անցանէ յերկրորդ նախադասութիւնն . զարմանայ ընդ վեհափառութիւն , ընդ իշխանութիւն , ընդ քաղցրաբարոյութիւն , ընդ բարեմասնութիւն , և ընդ լայնատարր հանձնար այս ինչ թագաւորի . հուսկ յետոյ եզրակացուցանէ , թէ հպատակքն պարտին սիրել զնա որպէս զհայր , մեծարել որպէս զտէր , և պատուել որպէս զփոխանորդ . Վստուծոյ ՚ի վերայ երկրի :

Վտենաբանութիւնն Ավելոնի որ ՚ի ջատագովութիւնն Ո՛խղոնի , ոչ այլ ինչ է բայց եթէ սեթեթեալ հաւաքաբանութիւն ինչ հռետորի , զոր տրամադրան ոք կարեր ասել պարզաբար այս պէս .

Երեալ է սպանանել զայն՝ որ լարէ որոգայթ . Կղողիս լարեաց Ո՛խղոնի որոգայթ .

Վորա ներեալէ Վիղոնի սպանանել զլվողիս :

Վիկերոն նախ ընդլայնէ զառաջին նախադասութիւնն , և ցուցանէ իրաւամբք ընականաւ , իրաւամբք ազգաց , օրինակօք և այն . յետ այնորիկ իջանէ յերկրորդ նախադասութիւնն , 'ի քըննութիւն մտանէ ծառայից՝ սպասաւորաց՝ և ամենայն պարագայից Ճանապարհորդութեանն կղողեայ , և ցուցանէ թէ կղողիս դիտէր սպանանել զլՎիղոն , յորմէ եզրակացուցանէ , թէ Վիղոն չեր յանցաւոր 'ի գործ դնելով զիրաւունսն , զոր ներէր հարկն օրինաւոր պաշտպանութեան անձին :

Բաց 'ի հաւաքաբանութենէ՝ առ որ վերածին ամենայն իրաւաբանութիւնք , պարտ է զիտել և զայսոսիկ , որք են հնարք՝ երկսայրաբանութիւն՝ համաբարդութիւն և մակածութիւն :

### ՅՈՒԹՈՒՄՆԵՐ ԺԵ .

Հնարք :

ՀԱՅԻՔ է անկատար հաւաքաբանութիւնինչ 'ի խօսս կամ հաւաքաբանութիւն կըրհատեալ . վասն զի ոմննք յառաջարկութեանց նորա 'ի բաց հատանին՝ իբրև քաջայայտք և ծանօթագոյնք , ենթազրելով թէ առ որս խօսին՝ զիւրաւ կարեն ընուլ մտօք զթերին . զոր օրինակ կատակերգութիւն է վնասակար , վասն զի մեղլիէ զսիրտ . կամ լաւ ևս ասել ,

Ամենայն որ մեղկէ զսիրտ է վնասակար .

Ապա կատակերգութիւն է վնասակար :

Յայտ է , զի յայս հնար զօրութեամք խմացեալ լինի փոքրագոյնն . իսկ հաւաքաբանութիւնն լինի այսպէս .

Այս ամենայն որ մեղկէ զսիրտ է վնասակար .

Արդ կատակերգութիւն մեղկէ զսիրտ .

Ապա կատակերգութիւնն է վնասակար :

Հասարակաբար տան օրինակ այսմզոտանաւոյնն ,  
զոր առէ Աենեկա 'ի զիմաց Աեղեայ .

Արաջ կարացից ըզբեզ փրկել ,

Աչ կարացից կորուսանել .

Եւ լինի հաւաքաբանութիւնն այսպէս .

Առաւել զիւրին է կորուսանել զոք , քան եթէ փրկել .

Արդ կարացի փրկել զբեզ .

Ապա կարեմես կորուսանել :

Այսպիսի է և այն նշանաւոր հնալք . Ամահ կանացուն ոչ պարտի պահէլ ոխս անմահս .  
լինի հաւաքաբանութիւնն այսպէս .

Առն մահկանացուի ոչ է պարտ պահէլ ոխս անմահս' որ յերկար տեւեսցէ քան զինքն .

Արդ դու ես այր մահկանացու .

Ապա ոչ է պարտ քեզ պահէլ ոխս անմահս :

## ՅՈՒԹԱՎՈՐ ԺԿՈՅ

Նրկանաբանութիւն :

ԵՐԿՍԱՅՐԱԲԱՆՈՒԹԻՒՆՆ է տրամաբանութիւն ինչ բաղադրեալ, յորում բաժանի բոլորն 'ի մասունս իւր . և եզրակացուցանի 'ի բոլորէն այն՝ որ եզրակացուցանի յիւրաքանչիւր մասանց իւրոց, վասն որոյ կոչեցաւ 'ԶԵՇՆԱՐԼՈՒԹԻՒՆ երկսայրի, զի երկուստեք հարկանէ . ըստ այսօ օրինակի ասացաւ առ Պիւռհօնականս՝ ողք պլնդէին չպիտել ինչ .

Կամ զիտեք զոր ասեք կամ ոչ զիտեք . եթէ զիտեք զոր ասեքն, ապա մարթ է զիտել ինչ . իսկ եթէ ոչ զիտեք զոր ասեքն, ապա մոլորիք յասելն ձեր՝ թէ չէ մարթ զիտել ինչ . վասն զի չէ պարտ ումեք հաստատել զայն՝ զոր ոչն զիտէ :

Կամ զիտեք կանոն երկսայրաբանութեան է՝ զի բոլորն չշղիւ բաժանեսցի յամենայն մասունս իւր . քանզի եթէ թուռումն մասանց լինիցի անկատար, յայտ է՝ զի եզրակացութիւնն ոչ կարէ լինելուղիդ : Օ որ օրինակ փիլսոփիայ ոմն ձեռնարկէր, թէ չէ պարտ ամուսնանալ, վասն զի, ասեր, կինն՝ զոր հանդերձեալ ես ածել կամ զեղեցիկ է կամ տգեղ . եթէ է զեղեցիկ, նախանձելի լինի այլոց, իսկ եթէ տգեղ՝ տաղտկալի բաժանումն ոչ է չիւդ, և եզրակացութիւնն

որ գտանի յիւրաքանչիւր մասին, ոչ է հարկաւոր :

Ա . Օ ի մարթ է ունել կին, որ չիցէ այնչափ գեղեցիկ, մինչև նախանձելի լինել այլոց . և ոչ այնչափ տղեղ մինչև տաղտկալի լինել :

Բ . Վին ոք կարէ լինել գեղեցիկ, միանգամայն այնպէս խոչեմ և առաքինի, մինչև չլինել առիթ նախանձու . և տղեղն կարէ լինել հաջելի իմաստութեամբն և բարուք :

Ե վերայ այսր ամենայնի պարտ է յերկսայրաբանութեան առաւելքան յայլամենայն տրամաբանութիւնս զգուշանալ, զի մի յիւր դէմն շրջեսցի ձեւնարկութիւնն : ( Օրինակ իմն, հաստատեր ոմն 'ի հնոց, թէ չէ պարտ ըստանձնել զպաշտօնատարութիւն հասարակապետութիւն՝ այսու երկ սայրաբանութեամբ . կամ բարւոք վարեսցէ ոք զպաշտօնատարութիւնն կամ չարաչար . եթէ բարւոք, թշնամի իւր յարուսցէ զպարաբարոյս, իսկ եթէ չարաչար՝ մեղիցէ :

Եթէ վարեսցէ զիշխանութիւն իւր քաղցրութեամբ և ներողութեամբ՝ ստացի բարեկամն զմարդիկ :

Եթէ վարեսցի միշտ արդարութեամբ՝ հաջոցիցի Կատուծոյ :

## ՅՈՒԹԱԾՈՅ ԺԵ.

Համաբարդութիւն :

Պատասխ և այլ տեսակ տրամաբանութեան ,  
որ բաղկանայ 'ի նախադասութեանց մի զինի  
միոյ կուտակելոց , որոյ Երկրորդն պարտի բացա-  
տրել զստորոգեալն առաջնոյն , և Երրորդն՝ զստո-  
րոգեալն Երրորդին , այսպէս հետ զհետէ մինչեւ  
ցվերջին հետեւութիւնն զոր կամի ոք Եզրակա-  
ցուցանել . զոր օրինակ Եթէ կամիցիմ ցուցանել՝  
թէ ազահքն են թշուառ , ասեմ . Վզահքն  
են լի ցանկութեամբ , որք ցանկան և կարօտին ,  
պակասին 'ի բազում կարեռաց կամ ընչից . իսկ  
որք պակասին 'ի բազում կարեռաց կամ ընչից ,  
են թշուառ . ապա ազահքն են թշուառ :

Վպաքէն հարկաւոր և էական է առ բարւոք  
համաբարդութիւն , զի նախադասութիւնք՝ որք  
դասաւորին մի զինի միոյ՝ ունիցին կապակցու-  
թիւնս , և զի մինն բացատրեսցէ զմիւն , ապա  
թէ ոչ իւրաքանչիւրքն լինին մասնաւոր նախա-  
դասութիւնք , որք ոչ պարունակեն զեզրակացու-  
թիւնն , որպիսի է այս հաւաքաբանութիւն Աի-  
րանոսի ՊԵՐԺԵՐԱՔԵԱՆ .

Խւրոպա է գեղեցկագոյն մասն աշխարհի .  
Կաղղիա է զեղեցկագոյն թագաւորութիւն Խւ-  
րոպայ .

Փարեղ է զեղեցկագոյն քաղաք Դաղղիոյ ,  
 Դապրոցն Պովեան է զեղեցկագոյն դպրոց փարիզու ,  
 Աենեակն իս է զեղեցկագոյն սենեակ Պովեան  
 դպրոցին ,  
 Ես եմ զեղեցկագոյն մարդ յիմում սենեկիս ,  
 Եղա ես եմ զեղեցկագոյնն յաշխարհի :  
 Ես տրամաբանութիւն բազկացեալ է 'ի նա-  
 խաղասութեանց՝ որոց իւրաքանչիւրքն զատա-  
 բար են մի մի մասնաւոր նախաղասութիւնք, որոց  
 մինն ոչ բացատրէ զմիւմն , և յորոց ոչ մին պա-  
 րունակէ զհետեւորդն :

### ՅՈՒԹԱՎՈՐ ԺԲ.

Մակածութիւն :

ՄԱԿԱԾՈՒԹԻՒՆ ԷՍ Է տեսակ ինչ տրամա-  
 խօսութեան , որով 'ի ծանօթութենէ բազում  
 մասնաւորաց՝ բերիմք 'ի ձանացումն միոյ ընդհա-  
 նուր ձմարտութեան . զոր օրինակ , զիործ ա-  
 ռեալ զիտեմք՝ թէ ամենայն մարդ սիրէ զախորժ  
 զգացումն , և թէ խորշի զլխովին յայնմանէ՝ որ  
 պատճառէ զցաւս . ըս այսմյայլ և այլ մասնաւոր  
 փարձառութեանց եղբակացուցանեմք մակածու-  
 թեամք , թէ ամենայն մարդ սիրէ զբարին , և ոչ  
 ոք կարէ սիրել զարն ըստ որում չար :

## ՅՈՒԹԱԾՈՅ ԺԹ.

Եղբակացութիւն :

ՅԱՅՑ է ամենայնե՞ւ յորոց ասացաք ցարդ ,  
թէ տրամաբանութիւնն կայանայ յերիս ներ-  
գործութիւնս մտաց . պարտ է Ա , Օ մոտաւ ածել  
զօրինակական գաղափար այնորիկ , զորմէ կամի  
դատել . իսկ զօրինակական գաղափարն ստանամք  
յընթացս կենաց անզրադարձմամբ . ըմբռնեմք  
զօրինակական գաղափար ինչ որ յաւէտ ծանօ-  
թագոյն է մեզ , նկատմամք Ենթակայի եղբա-  
կացութեան , զորմէ է խնդիրն : Բ , ՎՀՆՆԵԼ  
եթէ առարկայն զորմէ է խնդիրն , արգեօք իցէ  
կամոչ համաձայն այնմ օրինակական գաղափա-  
րի : Գ , Յուցանել 'ի ձեռն եղբակացութեան  
զհամաձայնութիւնն , կամ զանհամաձայնութիւն  
զոր յայտնի զգամք . զոր օրինակ , վիճեն ընդ իս  
վասն այսր ( ) զրոյ թէ իցէ բոլորակ , 'ի միտ  
ածեմ զօրինակական գաղափար բոլորակին , և  
զայս ձեւ բաղդատեմ ընդ այնր գաղափարի , և  
բացատրեմ 'ի ձեռն եղբակացութեան զայն , զոր  
զգամպատճառաւ այնր բաղդատութեան :

## ՅՈՒԹԱԾՈՅ Ե.

Ո՞Շ.

Ո՞չն է արհեստ տրամադրելոց զգաղափարս  
և զտրամախորհութիւնս այնու կարգաւ , որով  
լինի բարեկարգ յինքեան , և յաւետ հեշտընկալ  
և զիւրիմաց այլոց : Իսի հասարակաբար՝ թէ  
երկու տեսակք են ոճոյ՝ որոց մին կոչի վերլուծա-  
կան , և միւսն բաղադրական . վերլուծութին լինի ,  
յորժամ մանրակրկիտ խուզողութեամբ հասա-  
նէ յայն որ խնդրի . սա է տեսակ ինչ մակածու-  
թեան , որ կոչի և Ո՞Շ վերլուծական :

Հաղաղութիւնն որ և կոչի Ո՞Շ բաղադրա-  
կան , լինի յայնժամ , յորժամ յընդհանրագոյն  
իրաց սկսեալ հասանէ առ մասնաւորագոյնս . զոր  
օրինակ , յորժամ բացատրէ ոք զսեռն՝ յառաջքան  
զիսօսին զտեսակաց և զանհատից . կոչի ևս Ո՞Շ  
ուսուցանողական . զի այնոքիկ որք ուսուցանեն  
սկսանին հասարակօրէն յընդհանուր սկզբանց :

Եւ թէպէտ երկաքանչիւր ոճք կարեն նակաս-  
տել առ ուսուցանել , սակայն վերլուծականն ա-  
ռաւել յատուկ է , վան զի վերլուծութիւնն  
զհետ զնայ կարգի զաղափարաց մերոց , ածելով  
զմեզ ’ի մասնաւորաց յընդհանուրն :

Աղջունիք ոճոյ :

Ա. Յառաջանալ միշտ՝ ՚ի ծանուցելոյ առ ան-  
ծանօթն :

Բ. Եսածել չիշդ և որոշակի զբուն նպաստակ  
ինդրոյն, որպէս յաձախակի առնէ ծառայն յա-  
սէլ տեառն երթ և ինդրեա զբարեկամն իմ.  
Եթէ ծառայն երթիցէ յառաջ քան զորոշակի  
բացատրութիւն՝ թէ ո՛ իցէ բարեկամն այն,  
զոր աէր իւր ինդրէ, անկանիցի՝ ՚ի պակասու-  
թիւն ոչ բացորոշելոյ զինքն, մինչ չե որոշակի  
զիտացեալ զայն որ՝ ՚ի նմանէ ինդրի :

Գ. Խորշիլ յայնմ ամենայնէ՝ որ է անօգուտ  
և օտար՝ ՚ի ինդրոյն :


Դ. Ենթադրել իբրև ձշմարիտ զայն միայն՝  
զոր քաջ գիտէ թէ է ձշմարիտ :

Ե. Օ գուշանալ՝ ՚ի ձեպշտապ խորհրդոյ և ՚ի  
մոահաձութենէ :

Զ. Ոչ ըմբռնել ինչ՝ ՚ի դատմունս առաւել  
քան զայն՝ որ առաջի գնի մոտաց :

Է. Վննել թէ արդեօք զատումն ինչ հի-  
մնեալ իցէ՝ ՚ի վերայ արտաքին և յատուկ շարժառ-  
թի, որում մարդ իցէ լինել պատճառ :

Ը. Պմբռնել իբրև ձշմարիտ զայն՝ որ յայտ-  
նապէս երեւի ձշմարիտ, և երկբայական զայն՝  
որ է երկբայելի, և ձշմարտանման կամ հաւա-  
նական զայն՝ որ է ձշմարտանման կամ հաւանա-  
կան :



թ. • Ըաժանելզենթակայն զորմէ է խնդիրն յայնչափ մասուն՝ որչափ է հարկաւոր առյայտ յանդիմանութիւն և առ քաջբացատրութիւն :

Ժ. • Այսպէս թուռումն առնելմասանց ամենայն ուրեք՝ մինչև յապահովլինել թէ ոչ մնաց ինչ արտաքոյ բոլորին :

## ՅՈՒԹՈՒԾՈՅ ԻՆ:

Ո՞չ երկրաշափեց :

Ա. Երկրաշափք սկսանին՝ ի սահմանաց . մինչև ոչ թողուզերկդիմութիւն ինչ յեզերսն , ոչ վարեն՝ ի սահմանի բայց եթէ զծանուցեալ և զբացատրեալ եզերս :

Բ. • Դաենյետ այնորիկ զմեկն և զյայտնի սկըզ բումս . զոր օրինակ , թէ բոլորն է մեծագոյն քան զանձնիւր՝ ի մասանց իւրոց առանձինն :

Գ. • Օնախաղասութիւնն՝ որ փաքը մի խըրթնագոյն կամ դժուարին իցեն , ապացուցանեն՝ ի նախընթաց սահմանաց կամ յառածից յառաջագոյն բացատրելոց , կամ՝ ի նոցին համաձայն եղելոց , կամ մանաւանդ՝ ի նախաղասութեանց դիք կանխաւ են ապացուցեալ :



## ՑԱՆԿ ԳԼԽԱՑ

—•••••—

ՅՕԴ.	Ա.	Զանազանութիւն հրեշտակի և մարդկային հոգւոյ . . . . .	6
Բ.	Զանազանութիւն հոգւոյ և մարմնոյ . . . .	7	
Գ.	Միաւորութիւն հոգւոյ և մարմնոյ . . . .	8	
Դ.	Յասկութիւնք հոգւոյն . . . . .	9	
Ե.	Չորեքին գլխաւոր գործողութիւնք մտաց .	18	
Զ.	Բացասարութիւն գաղափարի . . . . .	21	
Է.	Տրամախօսութիւն . . . . .	23	
Ը.	Հաւաքաբանութիւն . . . . .	27	
Թ.	Դիտողութիւնք ի վերայ հիման հաւաքա- բանութեան . . . . .	30	
Ժ.	Կիւթ հաւաքաբանութեան . . . . .	34	
ԺԱ.	Հիմն հաւաքաբանութեան . . . . .	35	
Ժ.Բ.	Կանոնք հաւաքաբանութեան . . . . .	37	
Ժ.Գ.	Խմաստակութիւնք . . . . .	42	
Ժ.Դ.	Զանազան էջանակ տրամաբանութեան .	83	
Ժ.Ե.	Հնալը . . . . .	85	
Ժ.Զ.	Երկսայրաբանութիւն . . . . .	87	
Ժ.Է.	Համաբարդութիւն . . . . .	89	
Ժ.Ը.	Մակածութիւն . . . . .	90	
Ժ.Թ.	Եղանակացութիւն . . . . .	91	
Ի.	ՈՃ . . . . .	92	
ԻԱ.	ՈՃ երկրաչափից . . . . .	94	

Հ. Ա. Տ.